



### ՆԱԽԱԳԱՀ ՍԼԷՅՄԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԸ ՆԿԱՏԷ ԹՐԻՓՈԼԻԻ ՄԷՋ ԲԱՆԱԿԻՆ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ

Հանրապետության նախագահ զոր. Միշել Սլեյման կարեւոր նկատեց Թրիփոլիի մէջ լիբանանեան բանակին տեղակայումը՝ սանձելու համար անցեալ շաբաթավերջին Թրիփոլիի մէջ արձանագրուած ապահովական միջադէպերը:

Նախագահ Սլեյման հաստատեց, որ ինք մնայուն կապի մէջ էր ապահովական կառոյցներու պատասխանատուներուն, յատկապէս լիբանանեան բանակի իրամանատար զոր. Ժան Զահուաժիի հետ՝ հսկելու համար բանակին տեղակայումին, շրջանին ապահովական կայունութեան պահպանումին, Թրիփոլիի կամ այլ շրջաններու մէջ նման հարցերու կրկնութեան կանխարգիլումին, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի մէջ տիրող կացութեան հետեւանքները Լիբանան չփոխադրելու նախագգուշութեան:

Նախագահ Սլեյման ընդունեց վարչապետ Նեժիպ Միշաթին, որուն հետ քննարկեց Թրիփոլիի իրադարձութիւնները:

Վարչապետ Միշաթի նախագահը տեղեակ պահեց Թրիփոլիի մէջ տիրող կացութեան եւ ապահովութեան աստիճանական հաստատումին մասին:



Նախագահ Սլեյման եւ վարչապետ Միշաթի

Հանդիպումին ընթացքին քննարկուեցաւ նաեւ կառավարութեան գումարելիք այսօրուան նիստին օրակարգը:

Նախագահ Սլեյմանի այցելեց Աւստրալիոյ Նիւ Սաութ Ուելզ նահանգի վարչապետ Պերի Օ Ֆերըլը, որ հանրապետութեան նախագահին հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ տնտեսական, մշակութային եւ ներդրումային մարզերուն մէջ փոխադարձ գործակցութեան բարելաման հեռանկարները:

Նախագահ Սլեյման ճաշկերոյթ մը սարքեց ի պատիւ Օ Ֆերըլի:

Նախագահ Սլեյման ընդունեց նաեւ հանրօգուտ շինութեանց եւ վոլոնտէրներու հարցերու նախարար Ղազի Արիտին, որուն հետ քննարկեց ընդհանուր իրադարձութիւնները, ինչպէս նաեւ նախարարութեան աշխատանքները:

Նախագահական պալատի այցելուներէն եղան նաեւ երեսփոխաններ Թամմամ Սալամ եւ Նեպիլ տը Ֆրէյժ, ինչպէս նաեւ նախկին նախարար Ուատիի Խազն:

### ԻՊՐԱՀԻՄ. «ՄԱՌԻՆԱՌԻԻ ՉԵՐԲԱԿԱՆՈՒՄԸ ԳՐԱԴՈՒՄԸ ՆԱԴՈՒՆ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՀԵՏ ՈՉ ՄԷԿ ԿԱՊ ՈՒՆԻ»

Լիբանանի ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն զոր. Ապպա Իպրահիմ Լիբանանի մէջ հրատարակուող արաբական թերթերու լրագրողներուն հետ ունեցաւ զրոյց մը, որուն ընթացքին յայտնեց, որ տակաւին ժամանակը չէ հասած Շատի Մաուլաուիի ձեռքազրկման բոլոր մանրամասնութիւնները բացայայտելու, որովհետեւ ընդհանուր ապահովութեան աշխատանքը կ'ընթանայ առաւելագոյն զաղտնապահութեամբ՝ անոր յաջողութիւնը ապահովելու միտումով:

Իպրահիմ յայտնեց, որ Մաուլաուիի թղթածրարը փշոտ է ու բարդ՝ աւելցնելով, որ այդ թղթածրարին հետապնդումը կը կատարուի 13 օրէ ի վեր, եւ այդ մասին տեղեակ են միայն պատկան մարմինները:

«Մաուլաուիի թղթածրարը ունի միջազգային բնոյթ», ըսաւ ան:


Անդրադառնալով ներքին գործոց նախարարին կողմէ Մաուլաուիի ձեռքազրկուող սպային հետ կատարուած ներքին հետաքննութեան եւ անոր նկատմամբ որդեգրուելիք հաւանական կարգապահական տնօրինումներուն՝ Իպրահիմ յայտնեց, որ ինք իբրեւ ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն ենթակայ է ներքին գործոց նախարարութեան, որուն հետ գործակցութիւնը հեզգոստ կերպով կ'ընթանայ եւ այդ իմաստով ոչ մէկ հարց կայ: Ան ընդգծեց, որ իր հեղինակութիւնը դատական իշխանութիւններն են եւ ոչ թէ այս կամ այն փողոցին անկիւնը հսկող «ղեկավարները»:

Իպրահիմ հերքեց այս տեղեկութիւնները, թէ ձեռքազրկուած ահաբեկչական ցանցը կապուր ունի գէնք փոխադրող գրաւուած նաւուն հետ: Ան ըսաւ, որ Մաուլաուիի ձեռքազրկուելու այս գործողութիւնը ոչ մէկ կապ ունի Սուրիոյ հետ:

Ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէնութեան եւ քաղաքականութեան միջեւ յարաբերութեան մասին հարցումի մը պատասխանելով՝ Իպրահիմ յայտնեց, որ ընդհանուր ապահովութիւնը քաղաքականութեան մէջ խուլ է, բացի երբ ան կը փափաքի քաղաքական տեղեկութիւններ հաւաքել:

### ՊԸՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՑ Օ ՖԵՐԸԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ Այն Թիւնի մէջ ընդունեց



Պըրրի՝ աստրալիական նահանգային պատուիրակութեան հետ

Աւստրալիոյ Նիւ Սաութ Ուելզ նահանգի վարչապետ Պերի Օ Ֆերըլը, որուն ընկերակցեցաւ նահանգը ներկայացնող պատուիրակութիւնի մը՝ ներկայութեամբ Պըրրիի տեղեկատուական հարցերու խորհրդական Ալի Համմաւի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Լիբանանի եւ Աւստրալիոյ երկկողմանի յարաբերութիւնները:

Պըրրիի այցելեց նաեւ Լիբանանի մէջ Եգիպտոսի դեսպան Սոհամետ Թուֆիքը, որ Պըրրիի հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները: Խորհրդարանի նախագահը ընդունեց երեսփոխան Մարուան Համմաւի՝ ընկերակցութեամբ տիրոգի համայնքը ներկայացնող պատուիրակութեան մը:

### ՈԱՊԻԵՒ ՄԷՋ

### ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ՀԱՄԱՆՄԱՐՈՒՄԻ ԸՆԹԱՅԻՆ ՆԻՍ

Փոփոխութիւն եւ բարեկարգում համախմբումը երէկ յետմիջօրէին Ռապիէի մէջ գումարեց իր ընթացիկ նիստը՝ նախագահութեամբ երեսփոխան զոր. Միշել Աուի:

Նիստէն ետք տրուած մամուլի ասուլիսի մը ընթացքին, համախմբումի ընդհանուր քարտուղար Իպրահիմ Զանաան ցաւ յայտնեց Թրիփոլիի մէջ արձանագրուած ապահովական միջադէպերուն, ինչպէս նաեւ բանակը թիրախ դարձնող քայլերուն եւ յատարարութիւններուն գծով:

Զանաան հաստատեց, որ երկրին ապահովական հարցերը կարելի է միայն օրինական կերպով լուծել՝ պահպանելով Թրիփոլիի եւ Լիբանանի ապահովական կայունութիւնը: Անդրադառնալով ելեւմտական թղթածրարին լուծման՝ Զանաան յայտնեց, որ այդ լուծումը կարելի է ապահովել արտակարգ կերպով եւ առանց վնաս հասցնելու լիբանանցիներուն շահերուն:



Անդրադառնալով 8,900 միլիարդ լ. ոսկիի թղթածրարին մասին վարչապետ Նեժիպ Միշաթիի կատարած յայտարարութիւններուն՝ Զանաան յայտնեց, որ անհրաժեշտ է ապահովել լիբանանցիներուն իրաւունքները: Ան աւելցնեց, որ Ռապիէի եւ Պալատայի միջեւ հեռաձայնային հաղորդակցութիւն չէ արձանագրուած:

Անդրադառնալով 8,900 միլիարդ լ. ոսկիի թղթածրարին մասին վարչապետ Նեժիպ Միշաթիի կատարած յայտարարութիւններուն՝ Զանաան յայտնեց, որ անհրաժեշտ է ապահովել լիբանանցիներուն իրաւունքները: Ան աւելցնեց, որ Ռապիէի եւ Պալատայի միջեւ հեռաձայնային հաղորդակցութիւն չէ արձանագրուած:

### ՄԵՅԻՏ ՆԱՐԱՆԱ - ԱՀՄԵՏ ԺԸՊՐԻԼ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Հրգպալլայի ընդհանուր քարտուղար սեյիտ Հասան Նասրալլա երէկ ընդունեց Պաղեստինի ազատագրութեան ազգային ճակատի ընդհանուր քարտուղար Ահմետ Շաբիրի, որուն ընկերակցեցան իր օգնականը՝ Թալալ Նաժի եւ Պաղեստինի ազատագրութեան ազգային ճակատի անդամներու պատուիրակութիւն մը:



Նախագահ սեյիտ Իպրահիմ Ամին Սեյիտ:

Քննարկուեցան շրջանին մէջ տիրող քաղաքական իրադարձութիւնները, յատկապէս Պաղեստինի, Լիբանանի եւ Սուրիոյ զարգացումները:

Սեյիտ Նասրալլա եւ Շաբիրի ընդգծեցին երկկողմանի յարաբերութիւնները ամրապնդելու անհրաժեշտութիւնը, յատկապէս արձանագրուած զարգացումները:

### «ՄԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԱՒԵԼԻ...»

Շարունակուած Ա. Էջն

Այնուհետեւ խօսեցաւ Կուլիբե, որ ըսաւ. «Մենք երիտասարդ հանրապետութիւն մը ենք, բայց 70 երկիրներու մէջ դեսպանական ունինք: Պետական կառուցող շատ շուտ ձեւաւորեցինք: Ղարաբաղեան հարցին մասին քան տարիէ ի վեր կը խօսուի, բայց լուծման համար որեւէ քայլ չ'առնուի: Նմանօրինակ տագնապներ ուրիշ երկիրներու միջեւ ալ կայ: Իսրայելի ու Պաղեստինի միջեւ, կամ Հնդկաստանի ու Փաքիստանի միջեւ: Հայաստանի հետ եթէ բաղդատուի, մեր պիտո՞՞նէ Հայաստանի պիտո՞՞նէ անելի բարձր է: Ղարաբաղը 4500 քառակուսի քիլոմետր է, բայց հայերը գրաւած են 2,000 քառակուսի քիլոմետր: Պատերազմներն ալ իրենց օրէնքները ունին, բայց Հայաստան չէ ճանչցած այդ օրէնքները: Պատերազմին պատճառով 20 հազար իրաւունքներ ունենալու համար 50 հազար իրաւունքներ ունենալու համար 693 դպրոց քանդուեցաւ, 890 քաղաք ու գիւղաքաղաք գետնին հաւասարեցան, 695 հիւանդանոց, 922 գրադարան, 9 աղօթատեղի, 469 շուքարան ու թանգարան, 160 կամուրջ քանդուեցան, քանդուեցան

նաեւ ջուրի ու կազի հագարուող խողովակաշարեր: Այս բոլորը սարսփազդու տնօրէն են, Ազրայէճանի վնասը 60 միլիարդ տոլար է: Անոր համար կը կարտիւնը մահմետական երկիրներու զօրակցութեան: Բայց նաեւ շրջանի խաղաղութեան ու երջանկութեան համար պարտաւոր ենք այս հարցը լուծել ղիանազիտական միջոցներով: Մեզի համար ամենէն կարեւորը Ազրայէճանի հողային ամբողջականութիւնն է, բայց ինչ մեղք, որ սահկա տակաւին չենք կրցած իրականացնել: ՄԱԿ-ը թուրքի վրայ իբրեւ թէ այս հարցին լուծումը կ'ուզէ, բայց իրականութեան մէջ կը տեսնեք, որ որեւէ քայլ չէ առնուած: Այս աշխարհի մէջ իրաւացի ըլլալը բաւարար չէ, պէտք է ըլլալ նաեւ ուժեղ»:

հոն կը վաճառուին: «Մենք մեր իողողը գրաւող երկրի մը հետ կրնանք գործ ընել», հարցուց Կուլիբե: Ամենէն հետաքրքրական հարցումը եկաւ «Գիք» անուն կազմակերպութեան ներկայացուցիչ Ֆարուք Նաճի Ճէիսանէ, որ հարցուն, որ եթէ Ազրայէճան գիւտուրական ու տնտեսական գետնի վրայ Հայաստանէն անելի գորտար է, ինչո՞ւ են չէ կրցած առնել Ղարաբաղը: Այս հարցումին Կուլիբե տուաւ նոյնքան հետաքրքրական պատասխան մը:

«Մենք փառաւորապէս կրնանք ընել այդ բանը: Բայց պէտք չէ մոռնալ, որ աշխարհի վրայ տարբեր հաւասարակշռութիւններ ալ կան: Ասոնքմէ մէկը Ռուսիոյ հետ ստորագրուած համաձայնագիր մըն է: Այդ համաձայնագիրին համաձայն, եթէ մենք Հայաստանի դէմ պատերազմ հռչակենք, 5 թըքախօս հանրապետութիւններ պիտի ստիպուին Ռուսիոյ հետ միասին կանգնել Հայաստանի կողքին: Այն ատեն ալ կրնայ պատահիլ, որ մեր թուրք եղբայրները զինուոր կտորտը: Մենք չենք ուզեր, որ այսպիսի բան մը պատահի»:

### ՄԻՔԱԹԻ. «ԹՐԻՓՈԼԻԻ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՂՂՈՒԻ ԳԷՊԻ ԲԱՐԵԼԱՒՈՒՄ»

Վարչապետ Նեժիպ Միշաթի երէկ վարչապետարանի լրագրողներուն հետ ունեցաւ զրոյց մը, որուն ընթացքին հաստատեց, որ Թրիփոլիի կացութիւնը կ'ուղղուի դեպի կատարեալ հանդարտութիւն եւ խաղաղութիւն՝ նկատի ունենալով լիբանանեան բանակին տեղակայումը ժապալ Մըհսէնի եւ Պապ Թըպպաւնէի մէջ:

Ան հաստատեց, որ այդ շրջաններուն մէջ բանակին հանդարտ տեղակայումը նպատակ ունէր բանակին ու շրջանի բնակչութեան միջեւ հաւանական բախումները կանխարգիլել եւ առաջը առնել արինահեղութեան:

Վարչապետ Միշաթի դրուատեց բանակին, ինչպէս նաեւ նախկին վարչապետներ Սաատ Հարիրիի եւ Ֆուատ Սիւնիորայի կեցուածքները՝ աւելցնելով, որ Սիւնիորայի հետ գործակցութիւնը ընթացաւ մինչեւ վերջին վայրկեանները:

Միշաթի հաստատեց, որ ինք ամէն ջանք ի գործ պիտի դնէ եւ բոլոր կողմերուն հետ պիտի գործակցի, որպէսզի կարելի ըլլայ յառաջիկայ հանգրուանին երկրին ապահովական կայունութիւնը ամրապնդել:

«Լիբանանի պատմութեան մէջ երէկ զգայուն օր մըն էր, եւ մենք անհրաւումներուն կ'օժանդակենք, սակայն ոչ արդարութեան հաշուոյն», ըսաւ Միշաթի՝ ակնարկելով արգելափակելու իսլամականներուն:

Վարչապետ Միշաթի հաստատեց, որ Թրիփոլիի Նուր հրապարակին վրայ ընթացող նստացոյցը առկայ է՝ խօսքի ազատութեան սկզբունքները յարգելու շրջագծին մէջ:

Ան ըսաւ, որ Շատի Մաուլաուիի ձեռքազրկուումը ո՞՞ն ու եղանակը մերժելի են, որովհետեւ այդ նպատակով օգտագործուած է նախարար եւ երեսփոխան Սոհամետ Սաֆատիի անունը:

Վարչապետը շեշտեց, որ Մաուլաուիի հետ հարցաքննութիւնը կը շարունակուի:

Ան նշեց, որ նստացոյցին հարցը դիրաւ կարելի է լուծել՝ աւելցնելով, որ արգելափակուած իսլամականներուն թղթածրարին լուծումը մօտիկ ապագային պիտի կատարուի, երբ դատական իշխանութիւնները արագացնեն այդ արգելափակելներուն դատավարութիւնները:

Սուրիոյ տագնապին նկատմամբ չէ՞զոք կեցուածք որդեգրելու քաղաքականութեան մասին հարցումի մը պատասխանելով՝ Միշաթի շեշտեց, որ այդ քաղաքականութիւնը պիտի շարունակուի:

Միւս կողմէ, վարչապետ Միշաթի ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Մորա Զննելլի, որուն հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները:



Դեսպան Զննելլի եւ վարչապետ Միշաթի

Ամերիկեան դեսպանատան հրապարակած հաղորդագրութեան համաձայն, Ռաշինկընը մտահոգ է Թրիփոլիի կացութեամբ եւ ապաքինում կը մտադրէ վիրաւորներուն, ինչպէս նաեւ ցաւակցութիւն կը յայտնէ արձանագրուած զոհերուն համար:

### ԹՐԻՓՈԼԻԻ ՄԷՋ

### ՄՈՒՍԹԱՔՊԱԼ ՊԼՈՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍ

Նախկին վարչապետ, երեսփոխան Ֆուատ Սիւնիորա երէկ Թրիփոլիի «Զուլիխի ին» պատնոյնի մէջ նախագահեց Մուսթաքպալ երեսփոխանական պլոքի արտակարգ նիստին, որուն ընթացքին քննարկուեցան Թրիփոլիի գորակցութեան հեռանկարները:

Նիստէն ետք տրուած մամուլի ասուլիսի մը ընթացքին Սիւնիորա յայտնեց, որ Թրիփոլիի մէջ արձանագրուած վերջին իրադարձութիւնները հարցման նշաններ կը ստեղծեն՝ շրջանին մէջ բաժանում յառաջանելու եւ սադրանք նախապատրաստած ըլլալու առումով:

Սիւնիորա շեշտեց, որ խստի մերժելի են այն փորձերը, որոնք Թրիփոլի կը ներկայացնեն իբրեւ ահաբեկիչներ պահող շրջան մը:

Շատի Մաուլաուիի ձեռքազրկուումը քայլին մասին Սիւնիորա շեշտեց, որ այդ արարքը առեւանգում կը նկատուի եւ ոչ թէ ձեռքազրկում: «Այս երեսփոխան մտահոգիչ է եւ կարծեք արձանագրուած է հրդեհ մը բռնկեցնելու նպատակով», ըսաւ ան:

Սիւնիորա յայտնեց, որ Մուսթաքպալ պլոքը երկրին կառավարութիւնն ու վարչապետը պատասխանատու կը նկատուի Թրիփոլիի կացութիւնը խաղաղեցնելու եւ ապահովութիւնը վերահաստատելու առումով կատարուելիք որոշեցումներին պարտազային:

«Ո՛չ մէկ հովանաւորութիւն պէտք է ցուցաբերել այն կողմին, որ զենք կը բարձրացնէ եւ կը խախտէ երկրին ապահովական կայունութիւնն ու ազգային միասնականութիւնը», ըսաւ Սիւնիորա:

Մուսթաքպալ պլոքը կոչ ուղղեց նաեւ արագացնելու իսլամականներուն դատավարութիւնը:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՆԻՏԻՆ

- Ալիս Կիլիկեանի մահուան առիթով՝ Տէր եւ տիկին Միշել եւ Շաքէ Խորոզեան 50 ամ. տղար

ՏԵՍԱԿԵՏ

ԱԶՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՎԱՏԱՌՈՂ, ՀԱՄԿԱԼԻ ԵՒ ՈՂՁՈՒՆԵԼԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՄԸ

Ազրպեյճանի պաշտպանության նախկին նախարար Ռահիմ Ղազիե «Օպիեթիվ» պատկերասփիռի կայանին հետ հարցազրույցի մը ընթացքին խօսելով հայկական ուժերու կողմէ Շուշիի ազատագրման մասին յայտնած է, որ «Շուշիի անկումին համար ես միայն բարոյական պատասխանատուութիւն կը կրեմ», եւ պատասխանատուութիւնը ուղղակի կերպով բարդած է օրին Շուշիի պարտէս Էլպարու Օրաճեւի վրայ, իսկ անուղղակի կերպով Ազրպեյճանի նախկին նախագահ Յայտար Ալիեւի վրայ՝ նշելով, որ վերջինս 1992-ին իշխանութեան վերադառնալու ծրագիր ունեցած է, այլ խօսքով՝ այդ ծրագրի իրականացման համար Շուշին «յանձնած» է հայերուն:

Այս երեւոյթը զարմանալի չէ, այլ բնական արտայայտութիւնը այն հանրայայտ ճշմարտութեան, որ յաղթանակը բազմաթիւ հայրեր ունի, իսկ պարտութիւնը որք է: Պատերազմի մէջ պարտութեան մատնուած կողմ մը յաճախ ինքզինք վարկաբեկումի եւ նուաստացումի կացութիւնէ փրկելու, իր շարքերուն մէջ որոշ միասնականութիւն եւ իր կարողութեան նկատմամբ վստահութիւն պահպանելու փորձով մը կը դիմէ իր պարտութիւնը դաւաճաններու վերագրելու հնարքին:

Հարկ է նկատի ունենալ, որ Շուշիի ազատագրումը Արցախի ազատագրական պայքարին մէջ շրջադարձային զարգացում մըն էր, եւ աշխարհագրական անառիկ դիրքի տեր այդ քաղաքին կորուստը ազրպեյճանական բանակին համար էր եւ կը շարունակէ մնալ բարոյալքիչ ազդակ մը: Այսօր Ազրպեյճանի ղեկավար վերնախաւը կը փորձէ բազմատեսչ յայտարարութիւններով ծածկել իր ռազմամարդ եւ լաւապէս գինուած բանակին ամօթալի պարտութիւնը: «Մենք Հայաստանէն անելի ուժեղ ենք, կրնանք Ղարաբաղը ետ առնել» սնամէջ յայտարարութիւններուն շուտով կը յաջորդէ «սակայն»-ը: Իբրեւ արգելք կը նշուին «կարգ մը համաձայնագիրներ» կամ հարցը խաղաղ բանակցութիւններու ճամբով լուծելու Ազրպեյճանի «վեթմարտը» փափաքը:

Թէեւ ազրպեյճանցիներուն բարոյախոգեբանական այս վատառողջ վիճակը մեզի համար հասկնալի եւ ողջունելի կրնայ ըլլալ, սակայն անոնք չեն կրնար փախուստ տալ այն առարկայական ճշմարտութեան, որ ազրպեյճանական «ուժեղ» բանակը պատերազմի դաշտին վրայ փորձուցեալ, սակայն մարտի դաշտի բնութենէն ձախողած դուրս եկաւ: Դաւիթը յաղթեց Գողիաթին, եւ վերջ:

ՎԱՅՐԱՍ ԷՍՄԻԵՆ

«ԱՐՑԱԽՆ ԱԿՆԹԱՐԹՆԵՐՈՒՄ» ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ ՄՐՑՈՅԹ

Սիրելի՛ բարեկամ,

Հայաստանի Հանրապետության սփիւռքի նախարարութիւնն ի կատարումն Հայ լրագրողների 5-րդ համաժողովի որոշման կազմակերպում է «Արցախն ակնթարթներում» լուսանկարչական մրցոյթ:

«Արցախն ակնթարթներում» լուսանկարչական մրցոյթի մասնակիցները պետք է ներկայացնեն Լուստուամիջոցներում կամ այլ հրատարակչութիւններում արդէն լոյս տեսած Արցախեան տարբերութեանը, հերոսամարտին, առօրեային, պատմամշակութային արժեքներին ու շենացման գործընթացին վերաբերող լուսանկարներ, որոնք տարածուած կը լինեն պարբերական, տպագիր, էլեկտրոնային մամուլում կամ լուսանկարչական գործակալութիւնների կողմից:

Մրցոյթի իւրաքանչիւր մասնակից կարող է ներկայացնել մինչեւ հինգ լուսանկար: Ցանկալի է, որ լուսանկարները համապատասխանեն 3 mb եւ 300 ժրի փարպակներին: Լուսանկարների վերաբերեալ տեղեկութիւնները (ժամանակ, վայր, իրադարձութիւն, լուսանկարում պատկերուած մարդկանց անուններ, աշխարհագրական եւ պատմաճարտարապետական յուշարձանների անուանումներ, իրապարկման տեղ, ժամանակ, յղումը՝ էլեկտրոնային տարբերակի դեպքում, իսկ տպագիր տարբերակի դեպքում՝ սքեն եղած օրինակը, պաստառը եւ այլն) խնդրում ենք ուղարկել կից գրութեամբ:

Մրցոյթին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչեւ 2012 թուականի սեպտեմբերի 1-ը լուսանկարներն ուղարկել «Արցախն ակնթարթներում» լուսանկարչական մրցոյթ» մրցութային նշումով՝ Հայաստանի Հանրապետության սփիւռքի նախարարութիւն հետեւեալ հասցեով՝ ք. Երեւան, Վազգէն Սարգսեան 26/1, www.mindiaspora.am, info@mindiaspora.am, contact@mindiaspora.am, mindiaspora@yahoo.com կամ զանգահարել (+374 10) 58 56 01 /109/:

ՓԵՐՈՒՆ ԶԻՆԱԳՈՒԼԻ ՄԹՆՈՂՈՐՏԻ . . .

Շարունակուած Ա. Էջեմ

Թրիփոլի բնակիչները սկսան մաքրել փողոցները եւ վերցնել բախումներուն իբրեւ արդիւնք արձանագրուած նիւթական վնասները, ինչպէս նաեւ ստուգել իրենց բնակարաններուն հասած վնասները՝ ռմբակոծումին եւ բախումներուն պատճառով:

Ժապալ Մըհսէնի եւ Պապ Թըպպանէի մուտքին բանակը գետեղեց անցարգելներ, որոնց միջոցով ստուգեց դէպի այս երկու շրջանները մուտք գործող եւ անոնցմէ դուրս եկող քաղաքացիներուն ինքնութիւնը:

Ներքին ապահովութեան ուժերը իրենց կարգին, երէկ առաւօտեան կառուի ժամերուն գետեղեցին անցարգել մը եւ ստուգեցին Թրիփոլի մուտք գործող եւ անկէ դուրս եկող քաղաքացիներուն ինքնութիւնը՝ պահպանելու համար ապահովական կայունութիւնը եւ շրջանին վերադարձնելու քաղաքացիական անվտանգութիւնը:

Բանակի մասնախտուկ ուժեր շրջանէն դուրս բերին նաեւ չպայթած ռումբերն ու ձեռնառումբերը:



Նշեց սակայն, որ Թրիփոլի մէջ հաստատուած զինադուր լի փխրուն նկատուեցաւ՝ սպասելով Թրիփոլի պահպանական ուժերուն եւ ներքին գործոց նախարար Մարուան Շարպէլի միջեւ այսօր տեղի ունենալիք հանդիպումին:

ՆՍՏԱՅՈՅՑԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹ

Մինչ Թրիփոլի մէջ կեանքի նշույններ կը վերսկսին երեւիլ եւ զինեալ երեւոյթները կը չքանան, Ապտէլ Համիտ Քարամէի իրապարակին վրայ իսլամականներուն եւ սալաֆականներուն յայտարարած նստացոյցը կը շարունակուի:

Սայտայի Պիլա Պըն Ռապպահ մզկիթի իմամ շէյխ Ահմետ Ասիբ մասնակցեցաւ իսլամականներուն նստացոյցին եւ գորակցութիւն յայտնեց անոնց արշափին:

Նստացոյցին վայրը այցելեցին նաեւ քաղաքական կարգ մը անձնաւորութիւններ:

Նշեց, որ նստացոյցին լոյսին տակ անհատական զինեալ բախումներ ար-



ձանագրուեցան Նաշար եւ Հաժեր ընտանիքներուն միջեւ:

ԲԱՆԱԿԻ ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Լիբանանեան բանակի իրամանատարութիւնը իրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ, որ բանակը Թրիփոլի մէջ իր ստանձնած աշխատանքները պիտի շարունակէ:

Հաղորդագրութեան մէջ նշուեցաւ նաեւ, որ լիբանանեան բանակի զօրամասերը տեղակայուած են Թրիփոլի մէջ, յատկապէս Ժապալ Մըհսէնի, Պապ Թըպպանէի եւ «Սուրիա» փողոցին մէջ:

Ըստ հաղորդագրութեան, բանակը երկրին կայունութիւնը վերադարձուցած է իր հանդարտ ու խաղաղ իրավիճակին, ինչպէս նաեւ կը ջանայ շրջանին վերադարձնել ապահովութիւնը:

Հաղորդագրութեան համաձայն, բանակը ցաւ կը յայտնէ, որ եռօրեայ զինեալ միջադէպերուն ընթացքին բանակին եւ քաղաքացիներուն շարքերէն զոհեր ինկած են: «Երկրին տարբեր շրջաններուն մէջ ապահովութեան հաստատումը ազգային կարիք մըն է բոլոր լիբանանցիներուն համար: Խուճապը ոչ մէկուն շահերուն կը ծառայէ, իսկ լիբանանեան բանակին ներկայութիւնը՝ Թրիփոլի մէջ, կը միտի պաշտպանել երկրին կայունութիւնն ու քաղաքացիական անվտանգութիւնը եւ ոչ թէ շրջանին բնակչութիւնը սպաննել կամ անոր հետ բախումներ ունենալ», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

Բանակի իրամանատարութիւնը հաստատեց նաեւ, որ բանակը երբեք հետաքրքրուած չէ գրգռութիւններ իրահրող կեցուածքներով, որոնք այս կամ այն կողմէն կը հնչեն՝ հարուածելու համար բանակը, զայն ամբաստանելու քաղաքացիներուն դէմ լարուելու յանցանքով:

«Բանակի իրամանատարութիւնը կը վստահի Թրիփոլի բնակչութեան գիտակցութեան եւ կը հաստատէ, որ ինք ամէն ջանք ի գործ պիտի դնէ քաղաքին մէջ զինեալ երեսօթները ջնջելու, ինչպէս նաեւ առանց գգուշացնելու կրակ պիտի բանայ ռեւէ զինեալի դէմ», եզրափակեցաւ հաղորդագրութիւնը:

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսու կու գանք յայտարարելու, թէ 10, 11 եւ 12 մայիս 2012 թուականին, իրաքահայ թեմը գումարեց իր Պատգամաւորական ժողովը՝ Պաղատատի առաջնորդարանի դաշինքին մէջ:

Ազգային կեդրոնական վարչութեան հրաւերով ժողովին ներկայ էին Իրաքի մէջ գործող հոգեւոր հովիւներն ու Պասրայի, Քերքուքի, Մուսուլի, Չախուրի եւ Աւրուկի թաղական խորհուրդներու անդամները, իսկ Երպիլի, Տրոհի եւ Հաւրեզի յանձնախումբերը:

Ժողովը միաձայնութեամբ վերընտրեց Գերշ. Տ. Աւագ արք. Ասատուրեանը առաջնորդ Իրաքի հայոց թեմին յաջորդ բառամեայ շրջանին համար՝ ինտերորդ անգամ ըլլալով: Սրբազան առաջնորդի այժմու առաջնորդութեան ժամանակամիջոցը լրացաւ 5 մայիս 2012-ին:

Ժողովին ընթացուցեցան Ազգային կեդրոնական վարչութեան եւ շրջաններու գործունեութեանց տեղեկագիրները, ապա բնութեան ենթարկուեցան նախորդ շրջաններու եղած աշխատանքները:

Ժողովը կեդրոնացաւ ազգային ընդհանուր հարցերու վրայ. երկրին մէջ տիրող քաղաքական, տնտեսական եւ ապահովական աննպաստ պայմաններուն պատճառով ստեղծուած նոր վիճակը, արտագաղթը եւ ներքին տեղաշարժներու պատճառով կազմուած նոր համայնքներու հարցերը եղան կարեւոր խնդիրները, որոնցմով զբաղեցաւ ժողովը:

Ժողովը ծանրացաւ նաեւ հոգեւորականներու հետ առնչութիւն ունեցող հարցերու վրայ:

Ուսումնական հարցը եւս հետաքրքրական հանդիսացաւ ժողովին օրակարգերուն մէջ: Այս առնչութեամբ Ազգային առաջնորդարանը ջանք չի խնայեր մեր գաւակներուն հայեցի դաստիարակութեան զարգացման գործին՝ պետական ծրագիրներու կողքին:

ԴԻՄԱՆ ՊԱՏԱՍԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՄԱՀԱԶԳ

Տրիփոլի Մատեն Պոտրումեան եւ զաւակունք Տիար Յովհաննէս Պոտրումեան Տեր եւ տիկին Յակոբ Պոտրումեան եւ զաւակը Տեր եւ տիկին Գրիգոր Պոտրումեան եւ զաւակունք Տրիփոլի Մատեն Պոտրումեան եւ զաւակունք Տրիփոլի Կարապետ Պոտրումեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Վայէ Պոտրումեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Գեորգ Պոտրումեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Չաքար Պոտրումեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Յովհաննէս Պոտրումեան եւ զաւակունք (Երեւան)

Տրիփոլի Մատեն Պոտրումեան եւ զաւակունք Տեր եւ տիկին Օհան Պոտրումեան եւ զաւակը Ատուրեան Եղբարք Պոտրումեան եւ Ատուրեան ընտանիքներ Տաղեան եւ Գույումեան ընտանիքներ Տեօքմեճեան եւ Արախամեան ընտանիքներ Վարդանեան եւ Եօրեճեան ընտանիքներ Սեմերճեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գումար իրենց մօր, մեծ մօր, հորաքրոջ եւ հարազատին՝

ՄԱՐԻ ՊՈՏՐՈՒՄԵԱՆԻ

(Ծննալ՝ ԱՏՈՒՐԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 14 մայիս 2012-ին, կէսօրէ ետք ժամը 5:00-ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի հինգշաբթի, 17 մայիս 2012-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Նոր Միսի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ս. Սարգիս եկեղեցոյ սրահին մէջ, յետ թաղման արարողութեան, մինչեւ երեկոյեան ժամը 7:00, իսկ ուրբաթ, 18 մայիսին, հանգուցեալին բնակարանը՝ Արագած:

ՄԱՀԱԶԳ

Տիար Յակոբ Գարաշարեան եւ զաւակը՝ Ալեք Տեր եւ տիկին Տալին Գարաշարեան եւ դուստրը Տեր եւ տիկին Գեորգ Ապրիլեան եւ ընտանիք Տեր եւ տիկին Ժիրայր Կեչիճեան եւ ընտանիք Տրիփոլի Ալիս Սեթեան եւ զաւակունք Օրդ. Անտ Վարդանեան Վարդան, Ժորժ, Միշէլ Վարդանեաններ եւ ընտանիք Պուրպպա եւ Եուսեֆ ընտանիքներ եւ համայն ազգականներ կը գումար իրենց կնոջ, մօր, մեծ մօր, քրոջ, հորաքրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝

ԺԱՔԼԻՆ ԳԱՐԱՉԱՐԵԱՆԻ

(Ծննալ՝ ՎԱՐՎԱՆԵԱՆ, 1941-ի-ի)

մահը, որ պատահեցաւ կիրակի, 13 մայիս 2012-ին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ երեքշաբթի, 15 մայիսին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Նոր Մարաշի Սրբոց Զառանից Մանկանց եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
●Ցաւակցութիւնները կ'ընդունուին ԼՕՍ-ի «Յեղոշ Փափագեան» մասնաճիւղի սրահին մէջ, Ռատուա (Երևան), չորեքշաբթի, 16 մայիսին, Նոյն վայրին մէջ, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00:

Advertisement for galerie PIERROT, featuring children's furniture like beds and cribs. Text includes 'Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans' and contact info for Autostade Jal-el-Dib.

# ԼԵՌ ԿԱՄԱՐ. ՄԱՐԴԸ ԳՈՐԾԻՆ ՄԷՋԷՆ

Սոկրատեան կեցուածքը, գիտենք, կը բովանդակէ նաեւ քաղաքացիական գիծ մը, վերապահօրէն «պարտաճանաչ» գիծ - ա՛յն՛ որ հելլէն իմաստունը պիտի մղեր ընդունելու անարդար մահավճիռը եւ մոլեխիսիոյ բաժակը...: Զաղաքացիական շեշտուած գիծ, որու մասին կը վկայեն Լեռ Կամարի գործօն մասնակցութիւնը Վանի հերոսամարտին, ապա կամաւորական տարագով՝ ներկայութիւնը Սարիղամիշ՝ 1918-ին (ուրկէ ճակատի հրամանատար Դրօ Կանայեան գինք ետ թիկունք պիտի դրկէ՝ «Զեզ որ մի բան պատահի՛ բա մեզ ո՛վ է ծաղրելու, գնա, ա՛յ մարդ, գնա՛, քո գործն ուրիշ է, դու քո գործով զբաղուի» անարկութեամբ (35): Կամ՝ 1921-ի փետրուարէն ու ապրիլէն ետք, Պարսկաստան նահանջին իր մասնակցութիւնը, որոգուած կացինահար զոհերուն թաղում նախածննելու քայլին, որուն համար... պատիժ կը սպառնար իրեն եւ գործակիցներու (36): Նոյն քաղաքացիական գիծը կը խօսի իր մէջ, երբ՝ արտասահման անցնելու պարբերաբար յայտնած իր փափաքին ակնարկելով՝ կը ճշդէ.

**«Մեզ սաստիկ արգելուած է արտասահման գնալը, դրա համար էլ սաստիկ ցանկանում եմ արտասահման գնալ:»**

**«Եթէ արտասահմանի դուռը ազատօրէն բաց լինէր մեր առջեւ, կարծում էք կ'ուզենայի՞՞ գնալ: Բնա՛ւ երբեք: Ո՛վ իր հայրենի երկիրը թողած՝ պանդխտութեան ճամբայ բռնի: Ոչ ոք» (37):**

Ապա՛. կուսակցութիւններու եւ քաղաքական գործիչներու քննադատ ու ծաղկիչ այս անկուսակցականը, իր իսկ բառախաղային ընդդրոշմով՝ «պանկուսակցականը», որքան անխնայ՝ տոյքան արդար է եղած միշտ: Եւ գիտցած է գնահատել նախախորհրդային քաղաքական այն ուժերը, որոնք, հանրապետական խորհրդարանի մէջ իրեն «չէզոք պատգամաւորների լիդերի» (38) պթոռք առաջարկելէ ետք (առաջարկ՝ որ ինք պիտի չընդունէր անշուշտ), կը շարունակէին տեսնել ու գնահատել իր խայթոցներուն բուժիչ յատկութիւնը:

Խորհրդային տասնամեակներու թաւալքին հետ, երգիծաբանը կարօտով ու անող գուրգուրանքով պիտի վերյիշէ այսպիսի բարբեր ու վերաբերում, անհամեմատ աւելի պարկէշտ ու դեմոկրատական՝ քան սպանող ներկայ: Սկսած առաջին տասնամեակէն, ուր իր անսպասելի հեղինակութիւնը իր դառնան խորհրդային մամուլի մէջ «Դաշնակցութեան մահը» անտող ամենօրեայ լուրերը,- անցեալ/ներկայ այս հակադրումը աստիճանաբար պիտի դառնայ աւելի շեշտակի, ոգեկոչումները՝ աւելի կարօտալի: Դու մի քանի կարծակարկութիւններ միայն.

**«Այն ժամանակ, երբ մեր երկիրն ազատ էր, մարդիկ ունէին ոչ միայն մասնաւոր սեփականութիւն, այլ սեփական համովուճուք (...)** Կար մրցում ամեն բանի, հետեւաբար կենքը կար ամեն բանում (...) կուսակցութիւնների լիդերներ բեն էին բարձրանում իրենց գաղափարները տարածելու, մեկը ծափահարում էր, միւսը շուացում, լինում էին բացճակատ յարցողներ (...)» (39): Այսպիսի կարօտի արտայայտութիւն է այն դրուագը, ուր՝ դաշնամուրին արտասպանութեամբ «Կարկուտ տեղաց...» կը նուազէ, «մի կողմից էլ «Սա դաշնակցական երգ է...» մտածելով եւ մտովի գինք ձեռքակալելու գալիք չեկիստներուն պատասխանելով... (40):

Կամ երբ կը յայտարարէ՝  
**«Հայ իրականութեան մէջ, Դաշնակցութիւնն եղել է այն, ինչ Մամիկոնեան նախարարութիւնը հնում: «Այսինքն:**

**«Երբ հայ ազգը իր ամեն տեսակ նեղութեան մէջ օգնութեան է կանչել, անմիջապէս իր սուրն առած նրան օգնութեան է փութացել, չինայելով իր կենքը...» (41):** Անշուշտ երգիծաբանը առաւել՝ «լեռնամարտեան» է, երբ քաղաքական ուժերը կը գնահատէ՝ ո՛չ կարօտի զգացական մղումներով, այլ ազատութիւններու յարգանքի եւ մարդկայնութեան չափանիշներով: Ինչպէս, երբ՝ վերահաստատելով անկախ մարդու իր այդ կարգավիճակը ի պէտս «Սովետական Հայաստանի» բուրձմբազիրին ու Կենտրոնի, կը յայտարարէ. «Ես որ դաշնակցական թերթերում գրում էի՝ դաշնակ չէի, հիմա էլ՝ որ ձեր թերթում եմ գրում՝ բոլշեւիկ չեմ...», ու կ'աւելցնէ՝ «Ձեր թերթումները կի ծաղրեմ այն թափով, ինչ դաշնակցականներին էի ծաղրում իրենց թերթերում...» (42): Կամ երբ կը յիշէ. «Դաշնակցութիւնը ինքն իր ձեռքով էր փակցնում իր հիւանդ տեղերին ինձ, եւ ես ձեռաց առողջացնում էի նրան» (43):

Նոյն այս գիծը պիտի թելադրէ երգիծաբանին փորձել իրաւախոհութիւն, կոմպրոմիս՝ կրկնուած դիմումներով վարչակարգի մեծերուն: Ի հարկէ՝ ծախողութեան դատապարտուած դիմումներ, քանի իրեն համար բացարձակ նախապայման պիտի պահէր պարկէշտութիւնն ու արժանաւորութիւնը:

Երբ կը հակինք իրաւախոհութեան այս փորձերուն վրայ, հարկ է անորադառնալ կարիքի ահաւոր բեռան մասին, որ երկար տարիներ ծանրացրէ է երգիծաբանի ուսերուն: Այս մէկը՝ կ'առնուի Չարենցի դեկավարած «Չտումի» պատմութեան.

**«Աստուած իբր գերագոյն պատիժ Ադամին տուեց իր ճակատի քրտինքով աշխատելու եւ ապրելու պատիժը. այսօր այդ պատիժը պարտէ Ե արդէն, որից զրկում են՝ ինձ, չասելով սակայն՝ ինչ ո՞վ պիտի ապրեն դուրս գալով «դրախտից»:**

**«Եթէ խնդիրը ինձ, կնոջս եւ 90-ամեայ մօրս վերաբերի՞ ոչինչ, ես կ'օգտուի «Սոկրատեսի բաժակից» առանց ամենայն աստուանցի (...)** Ծերունի մօրս կը հրամայէի արագացնել քայլերը, մի բան էլ կինս կ'անէր: Բայց բանը նրանում է, որ ես միակ կերակրողն եմ երեք փոքրիկների, որոնցից մեծը միայն վեց տարեկան է, եւ որոնք, տանը նստած, ողջ օրը «Լենին պապի» են մեծարում եւ «Տրակտոր քան» երգում (...) Նրանց հետ ի՛նչ պիտի անել» (44):

Իրաւախոհական դիմումի օրինակ՝ կենտրոնի քարտուղար Չարբաբեանի ուղղած նամակներէն մէկը.

**«[2. Գրիգորեանի]ն դիմեցի եւ հետեւեալ պատասխանը ստացայ.**

**«- Մենք առայժմ սուր ֆելիետոնի կարիք չունենք: «Պատասխանեցի.**

«Ես բուրք ֆելիետոն էլ կարող եմ գրել, եթէ այդ Ձեզ հարկաւոր է» (45):

Իրաւախոհական հակումը պարագայական չէ միայն. աշխարհայեացքային ամբողջ խորք մը ունի.

**«Մեկը եթէ ինձ հարցնելու լինի՞ ի՛նչ հասարակարգ ես ցանկանում, ես կը պատասխանեմ՝ մի հասարակարգ, ուր մարդ ազատ լինի իր բոլոր գործերում եւ վերանայ միջամտութիւնը: Այսինքն՝ անարխիզմ:**

**«Ու եթէ այդ մեկը, ընդառաջելով իմ ցանկութեանը, սկսի պետական չափանները քանդել, ես նրա ձեռքը պիտի բռնեմ ու աւելացնեմ անմիջապէս.**

**«- Այո՛, բայց հնարաւոր չէ այդ: Մենք Ռոբինզոն Կրուզօ չենք եւ պարտ մենաւոր կղզում...» (46):**

Իրաւախոհական գիծը կը դադրի տիրող ըլլալէ - մասնաւոր երբ գուր անցած են բանական «գիշումի» բոլոր քայլերը, զգորցային մտալու դատապարտուած ձեռագիրներու տրցակներ ձգելով միայն իրեն (առաւել՝ անոնց բռնագրաման ու հետեւող պատուհասումին վտանգը): Տիրողը հոս՝ անգիշող սկզբունքայնութիւնն է, թէեւ Դիոգիւսե-Կամար պիտի չստործէր այս բառերէն - այնքան բնական է իր մօտ ու ինքնաբերական սկզբունքային այդ պարկէշտութիւնը: «Պլենում»ի ահաւոր երգիծապարսազիրը որօշի պէս ծածանեցնող երգիծաբանը, այսպէս, իրաւացիօրէն պիտի մեղադրէ «մեր պատուարժան գրողներն Իսահակեանն ու Շիրվազազնէն», որոնք «Փարիզէն խորհրդային իշխանութեան կողմէ Հայաստան են հրաւիրուած, ամսական 250 ռուբլով սոցիալիստ ըլլալու համար...: Յիշեալ գրողները ըստ ռոճկացուցակի փետրուարի 15-ին արդէն սոցիալիստ են խաբէր են իրենց քոլերը կապերը ազգային շրջանակներու հետ ... Ահա այսպէս կ'ըլլայ բոլոր գրողներուն վախճանը, որոնք իրենց քարոզած «անկաշառութեան» ու «մաքրութենէն» պատառ մը չեն կտրեր անդին դէտր, իրենց ծերութեան օրերը գարդաբելու եւ պատուով մեռնելու համար...» (47):

Ծիշո՛ւ, է որ Իսահակեանի հանդէպ այս խստութիւնը պիտի մեղմանայ, յայտնօրէն՝ հետագայ անձնական շփումներու ու համակրանքի իբր հետեւեալ - առանց սակայն լրիւ անհետանալու: Այս վերաբերումին անորադարձ եղաւ աւելի վեր: Նոյնպիսի ներողամիտ, համակրական վերաբերում կը հաստատենք Ստ. Չօրեանի հանդէպ, որուն ուղղուած իր նամակը (1965), սիրալիր բայց մեղմօրէն մեղադրական, շատ բնորոշ է դարձեալ.

**«... ես մեծ հաճոյքով եմ կարդում քո պատմութեանը ... Դու զուպ ես եւ չափաւոր ոչ միայն քո գործածքներում, այլեւ քո առօրէն կենցաղում ... Դու որպէս իսկական գրող, ճիշդ է որոշ տուրք տուիր սրանց արտառոց սոցիալիզմին (...), բայց ով քեզ անձամբ ճանաչում է՝ գիտի դրանք ոսկորներ էին, որոնք զգեցիր «շան» առաջ, որպէսզի թոյլ տայ քեզ զբաղուել իսկական արուեստով:**

**«Ստեփան, դու շատ լաւ գրող ես, ապրեն, աւելի Չօրեան դառնա: Բայց...**

**«Բայց դու մի մեծ մեղք ունես: Դու սքանչելի պատկերացնում ես անցեալը, զանց առնելով քո ապրած դարաշրջանը...» (48):**

**«Անցեալապաշտութեան»** նոյն մեղքով պիտի ամբաստանուին նաեւ Դեմիրճեան, Ն. Չարեան եւ այլք: Տեղի տալով հեղինակական մեկնաբանութեան մը. «Այսքան էլ բուն զգուանք դէպի սովետական կարգերն ու իր թեմաները...» (49):

Հակադիր ուղղութեամբ մը, երգիծաբանը կը շնորհաւորէ Շուրիտը, որ՝ «մեծ գրող՝ (...) «գրում է միայն ճշմարտութիւնը»:

**«Երբ ես կարդացի նրա «Հերկած խոպանի» առաջին հատորը՝ ասացի:**

**«- Սրա երկրորդ հատորը չի լինի: «Եւ իսկապէս էլ, նրա երկրորդ հատորը չգրեց Շուրիտը:**

**«Ինչո՞ւ: «Որովհետեւ նա իր վէպի առաջին հատորում միակամայն ճշմարտացիօրէն տալով բոլշեւիկների՝՝ ինչ կարգերը տապալելու պատմութիւնը, բնականաբար երկրորդ հատորում պիտի տար նոր կարգերի կառուցում, որ... գոյութիւն չունի» (50):**

### ՅԱՐՈՒԹԻՆ Լ. ԶԻՐԵՃԵԱՆ

(Շար. 3)

- (35) «Կարմիր Օրեր», էջ 8:
- (36) Անդ, էջ 406:
- (37) Անդ, էջ 355:
- (38) «Դիւան Լեռ Կամարի», «Ազատամարտ - Վարժան», թ. 7 (20), Նոյեմբեր 1994:
- (39) «Սոցիալիզմի Սահարա», էջ 135:
- (40) «Կարմիր Օրեր», էջ 381:
- (41) Անդ, էջ 197:
- (42) Անդ, էջ 187:
- (43) Անդ, էջ 365:
- (44) «Բանտի օրագիրը», էջ 48:
- (45) «Կա՛յ՝ արդեօք վերադարձի մի նշյոլ կամ Բնաւեր, տնաւեր վասպուրականցի», Վանուհի Թովմասեան, «Ազգ - Սշակոյթ», Եր., 21 ապրիլ, 2007:
- (46) «Կարմիր Օրեր», էջ 340-341:
- (47) «Մահապարծ Օրագիր», էջ 174:
- (48) «Նամակ Ստեփան Չօրեանին», «Ազգ - Սշակոյթ», Եր., 19 դեկտ. 2009:
- (49) «Կարմիր Օրեր», էջ 70:
- (50) Անդ, էջ 364:

## ՀԱՍՏՉԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ԴՊՐՈՑԻՆ ԾԱՂԻԿԸ

### «ՔՆԱՐ» ՊԱՐԱՆՈՒՄԲԸ



Համազգայինի «Լեւոն Շանթ» մշակոյթի կեդրոնի գեղարուեստական յայտնաբերումները ծաղկուն պարտեզի մը հմայքը ունին: Մամուլը գրական ու լատեսողական արտայայտութիւններով կ'արձագանգէ իրագործուած աշխատանքներուն՝ հանրութիւնը տեղեակ պահելով ձեռք բերուած յաջողութիւններուն: «Թորոս Ռուվին» կերպարուեստի դարձող նուազումներուն մասին ուրախութեամբ հետեւեցանք: «Բարսեղ Կանաչեան» երաժշտական դպրոցի վերելքն է ծափահարելի գործունեութեան վերաբերեալ նորագոյն իրագործումները պարծանքով դիմաւորուեցան: Թատերական մարզը արդէն հանդիսական ներկայացած է իր թատերախաղերու նորութիւններով՝ նոր ուժերու մասնակցութեամբ փայլելով: Այսօր հերթը պարարուեստի բաժանմունքին ստեղծած խանդավառ մթնոլորտը մեզ կը ստիպէ գնահատական տրամադրութեան անդին անցնելու եւ յայտնելու մեր հիացումը այս պարագային «Քնար» պարախումբին եւ անոր պարուստոյ Յովհաննէս Խաչիկեանին:

Յայտագիրը կը շարունակուի: Հապա՛ «Սուրերով պար»-ը: Հոգիդ լուսաւորուի Արամ Խաչատուրեան, այդ ինչ աստուածային ներշնչումով ստեղծուած է այս գերագոյն գիւտը: Եղանակ մը, որ համաշխարհային համ ունի: Այդ ծափահարեց բուն ու ջերմ, պառուներ կը լսուին սրահէն: Քիչ ետք «Լեզգիկա»-ն, այնքան թովիչ ու առնական հմայք: Մեր տղաքը գմայելի էին իրենց ճկունութեամբ, աջրոպաթիք թեւածումներով: Ապրի՛ք, տղաք: Նոյնպէս աղջիկները մեր՝ հայեցի ու կանացի: Նազանք եւ հեզ կերպարանք, առանց շռայլ ծեծծեքումի կամ ցանկայարոյց ճիգերու: Պետք է շարունակուի այս ցնծուն տրամադրութիւնը: Գեղարուեստի ղեկավար եւ պարուստոյ Յովհաննէս Խաչիկեան, վարձեղ կատար: Հնարամիտ էք ու նորութիւններու ջատագով: Այո, պարեր էին, բայց

«Լա Սաժես» հանդիսասրահը լեցուն է ուրախ հանդիսականներով: Ուրբաթ, 11 մայիս 2012-ի երեկոյեան մեր կարգին ներկայ ենք եւ կը սպասենք պարային ներկայացման: Արաւիկը գովազուած է գերաստիճան սառնութեամբ, բայց մեր սիրտերը ջերմութեամբ գեղուն՝ կը սպասենք վարագոյրի բացման, որ պատուաստ է արդէն բեմական յարդարանքով ընդունելու պարի մեր վարպետները: Բեմը բաց է արդէն, սիրտերու ջերմութիւնը կը նուաճէ սրահին ջերմաստիճանը, ու ամեն ինչ կարգին ըլլալով՝ կը հնչէ հանդիսութեան սկիզբը յայտարարող փողային ազդը: Ու բեմը կը թնդայ...

**«Ու նայիրեան աղջիկների հեզակուն պարն եմ սիրում» Ե. ՉԱՐԵՆՑ**

Պարերու հեղեղը կը յորդի. «Չոյգ

ԸՆԴՆԱՐՈՒՄՏ  
Շար.ը՝ էջ 8

## ԼՕՍ-Ի «ԱՆԻ» ՄԱՍՆԱԾԻՂԻ 40-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՄԸ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՆ

Հո վ ան աւ որ ու թ է մ ք ԼՕՍ-ի Շրջանային վարչութեան, հիւնգաբթի, 10 մայիս 2012-ի առաստուան ժամը 10:00-էն սկսեալ, Չալքայի «Մշրապիէ» ճաշարանին մէջ փառաշուք հանդիսութեամբ նշուեցաւ ԼՕՍ-ի «ԱՆԻ» մասնաճիւղին հիմնադրութեան 40-ամեակը:



Լիբանանի, Հայաստանի եւ ԼՕՍ-ի քայլերգները յոսնկայս ունկնդրելէ ետք, մասնաճիւղի ատենապետ Սալի Թորիկեան բացուած յայտարարեց ձեւարկը:

Բացման խօսքին մէջ ատենապետը հակիրճ ձեւով ներկայացուց ԼՕՍ-ի «ԱՆԻ» մասնաճիւղին գործունեութիւնը, ան ներկաներուն փոխանցեց, թէ «ԱՆԻ» մասնաճիւղը հիմնուած է 1972-ին, Նահր Սոթի շրջանին մէջ: Զառասուս տարիներ առաջ խումբ մը նուիրեալ ԼՕՍ-ական ընկերուիներ գործի լծուեցան անձուկ վիճակի հայորդիներուն նեցուկ ըլլալու եւ անոնց առօրեան դիրացնելու: Կարչութիւնները շարունակաբար իրարու յաջորդեցին, կարգ մը ընկերուիներ առյաւել մեկնեցան, որոնց այսօր պարտքը կը զգանք յարգանքի տուրք մատուցելու, ուրիշներ երկար ծառայեցին եւ նոր վարչականներու փոխանցեցին գործը, նորագիրներ եկան եւ ահա երկար ճամբայ քալած, քանի մը ամեակներ տօնած, բազում աշխատանքներ տարած «ԱՆԻ» մասնաճիւղը այսօր իր 40 տարին կը թեւակոխէ: Պետք է թիկունք կանգնի, նոր ուժ մերարկել, անվարան մղում տալ անոր՝ միշտ աշխուժ ու գործունեայ պատկու համար գայալ:

Ընկերուիին բարձր գնահատեց մասնաճիւղի վարչական ընկերուիներուն նուիրեալ ու մեղուական գործունեութիւնը եւ շնորհաւորեց ու մարտնչ, որ ապագայ սերունդները, մնալով հաւատարիմ ԼՕՍ-ի հայապահպանման առաքելութեան, նոյն ուղիով գործեն ու հասնին նորանոր յաջողութիւններու: Ապա ան հրաւիրեց շրջանի վարչական ընկերուիներէն՝ Սեւան Կարապետեան-Արամեանը, որպէսզի վարձ ձեռնարկը եւ իր գեղեցիկ ու հրապուրիչ ձայնով խանդավառ մթնոլորտը մերթ ընդ մերթ աշուղական եւ տոհմիկ երգեր երգելով, նաեւ՝ մէքբերումներ ընելով: Ան իր կարգին ներկայացուց գեղարուեստական յայտագիրը՝ հերթաբար հրաւիրելով հայրենի դաշնակապար Կարինէ Կակոսեանը եւ շուրհարար Կարօ Սվաքճեանը: Ապա հրաւիրեց ԼՕՍ-ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Սիւզան Օհանեանը, որ իր կարգին բարձր գնահատեց ԼՕՍ-ի սրբազան առաքելութիւնն ու ազգապահպանման գործը, ինչպէս նաեւ՝ ԼՕՍ-ի ական ընկերուիներուն բերած ներդրումը այս պանծալի կազմակերպութեան, որոնք յոյսի ու լոյսի դուռ կը բանան գալիք բոլոր սերունդներուն:

Յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Սիլվա Գանգրուհի՝ ամուսնով եւ Սեւան Հապիպ՝ երգով, որ իր հմայիչ ձայնով հրապուրեց ներկաները:

# ՈՒՂՊԵՔԻՍՏԱՆ. ԹԱՇՔԵՆՏԻ ԿԱՐԾՐ ՍՕՏԵՑՈՒՄԸ՝ ՍԵՂՄԵԼՈՒ ԹՐԻԶԱԿԱՆ ՄԵՂՍ ՈՒԺԸ

Կրօնը սեպ մըն է, որ Ուզպեքիստանն ու Թուրքիան իրարմէ կ'անջատէ:

Վերջին ամիսներուն Ուզպեքիստանի առաջնորդները սաստկացուցին արշաւ մը՝ գապելու, հակակշռելու համար իրենց երկրին մէջ թրքական տնտեսական եւ մշակութային ազդեցութիւնը:

Այս արշաւին առաւել նշանաւոր բաղադրիչը եղած է վերջին երկու տարիներուն ընթացքին 54 թուրք գործարարներու ձեռնարկութիւնը եւ առնուազն թրքական առեւտրական 50 ձեռնարկութիւններու փակումը: Բացի ատկէ, նախագահական վարչակարգը փետրուարի վերջաւորութեան հրահանգեց պետական բոլոր պատկերասփիւռի ալիքներուն՝ դադարեցնել սփռումը թրքական զանաւաններու, պատճառաբանելով, թէ ատոնց «անպատշաճ» են ուզպեք ակնկիրներուն համար: Թուրքիոյ կողմէ ֆինանսաւորուած դպրոցները եւս փակել հրահանգուեցաւ:

Թաշքենտի գործողութիւններուն ետին կը գտնուի աճող անվտանգութիւնը Թուրքիոյ իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում կուսակցութեան (ԱԲԿ) իսլամական արեւելումին հանդէպ:

Կարծեք թէ Ուզպեքիստանի նախագահ Իսլամ Զարիմովի կառավարութիւնը մտահոգ է, որ ԱԲԿ կ'աշխատի ոչ միայն Թուրքիոյ, այլեւս Կեդրոնական Ասիոյ թրքալեզու պետութիւններուն մէջ նպաստել իսլամական բարեպաշտութեան ծաղկումին: Թաշքենտ մասնաւորաբար կը կասկածի, որ ԱԲԿ ձեռով մը կը դրոշ իսլամական միսլոնարական շարժում մը՝ առաջնորդութեամբ թուրք սաստուածաբան Ֆեթուլլա Կիւլէնի, որուն գաղափարները արմատաւորուած են 20-րդ դարու կիսուն Կեդրոնական Ասիոյ Նուրուլլա Կոլմէ ընդունած հետևանքողութիւններու, պատկերացումներու մէջ: Թէեւ երեւութապէս՝ ոչ վայրագ, Կիւլէն շարժումը արգիւյրած է Ուզպեքիստանի մէջ, երկիր մը, որ կրօնական արտայայտութեան բոլոր ձեւերը կը պահէ կառավարութեան խիտ հսկողութեան տակ: Կիւլէն շարժումին հետևորդները ճանչցուած են իբրեւ նուրքուս:

Թաշքենտ եւ Անգարա յարաբերութիւններու ծաղկում մը վայելցեցին 1990-ականներու սկիզբը, երբ Թուրքիոյ կը ձգտեր հաղորդակցիլ, կապուիլ Կեդրոնական Ասիոյ նորաստեղծ «Թրքալեզու» հանրապետութիւններուն հետ: Բայց յարաբերութիւնները սկսան վատթարանալ, երբ Անգարա մերժեց արտայանձնել Զարիմովի քաղաքական հակառակորդները, որոնք Թուրքիոյ ապաստանած էին՝ փայտելով անոր աճող ամբողջատիրական իշխանութենէն:

«Ուզպեքիստան Թուրքիան մեղադրեց Ուզպեք հանրակիցները պատասպարելուն եւ Ուզպեքիստանի մէջ արգիւյրելու կրօնական ընդդիմութեան խմբակները հովանաւորելու համար», ըսաւ Թաշքենտ տեղակայած լրագրող մը, որ ապահովական մտահոգութիւններով չուզեց անուղից հրապարակել: Ան կը մասնագիտանայ Ուզպեքիստանի դիւանագիտական յարաբերութիւններու ճիւղին մէջ:

Թրքական առեւտրական ձեռնարկութիւնները փակելու Ուզպեքիստանի արարքը իր մէջ կրօնական ակներու ուղղութիւն մը ունի: 2011-ի վերջաւորութեան մեղադրուած թուրք գործարարներէն շատեր 2-3 տարուան ազատազրկման վճիռներ ստացան, եւ անոնց սեփականութիւնները գրաւուեցան: 54 գործարարներէն 12-ը ներում ստացած են երկրէն արտաքսուած են:

Յետապնդման ընթացքին պետութեան հսկողութեան տակ գտնուող պատկերասփիւռի ալիքները սփռեցին այնպիսի յայտագիրներ, որոնք յստակօրէն պարտաստուած էին հակաթուրք գզացումներ հրահրելու համար: Օրինակ, փետրուարի վերջաւորութեան վաւերագրական ժապաւեն մը՝ «Ոճիք եւ պատիժ» խորագիրով, որ սփռուեցաւ պետական երկու կայաններէ, վստահեցուց, որ ձեռքարկուած գործարարները օգուած են՝ «Մեր երկրի ներդրումային բարենպաստ կլիմային եւ տնտեսական ոճիւրները գործած են, ներառեալ՝ կեղծուած ապրանքներու առեւտուր եւ անազնի հաշուապահութեան օգտագործում՝ շահող թաքցնելու համար»: Վաւերագրական ժապաւենը (որ կը պարունակէր մեղադրուածներէն ոմանց խոստովանութիւնները) կը հաստատէր, թէ ձեռքարկուած գործարարներէն ոմանք առնչուած են Կիւլէն շարժումին:

Բացի կրօնական տարրէն, կը թուի, թէ կառավարական փտածութիւնը գործած մըն է արշաւին մէջ, կը պնդեն որոշ դէտեր: Թաշքենտ տեղակայուած ելեմտական հարցերու վերլուծաբան մը կը կասկածի, որ թրքական շահերու վրայ յարձակումները կրնան մէկ մասը ըլլալ գոյքի, ինչքի վերաբաշխման շարունակուող հողվոյթի, որ սկսած է 2010-ին: Այդ տարիի իշխանութիւնները մեծ թիւով արտասահմանեան եւ տեղական առեւտրական ձեռնարկութիւններ փակեցին, ներառեալ՝ զուկեքիական Չերուամքս ընկերութիւնը, եւ բանտարկեցին անելի քան տասնեակ մը տեղացի գործարարներ եւ գրաւեցին անոնց գոյքերը:

Շատեր կը հաւատան, որ թուրք գործարարները կրնան պատժուիլ իրենց շահողը բարձրաստիճան պաշտօնատարներու հետ չբաժնելու համար:

«Մեր երկրին մէջ գործարարները կաշառք պետք է տան, եթէ կ'ուզեն իրենց առեւտուրը շարունակել», ըսաւ ելեմտական հարցերու մասնագէտը: Փակուած ձեռնարկութիւններէն են՝ «Տեմիր» եւ «Թիւրքուազ», Թաշքենտի ամենէն մեծ առեւտրական երկու կեդրոնները:

«Թուրքերը սեփականատեր էին շահութաբեր վաճառատուներու, ինչպէս՝ «Թիւրքուազ»-ը, եւ այս հանգամանքը երկար ատենէ անոնց մրցակիցներուն նախանձը կը հրահրէր», ըսաւ Թաշքենտ բնակող խանութիւն մը, ըստ որուն, «մրցակիցները» բարձրաստիճան պաշտօնատարներ եւ անոնց ընտանիքներն են:

Հարցազրոյցի մը մէջ ուզպեք բարձրաստիճան պաշ-

տօնատար մը հերքեց այն պնդումները, թէ կառավարութեան գործողութիւնները քաղաքական դրդապատճառներ ունին: Ան ըսաւ, որ բացի թուրքերէն, համատեղ ձեռնարկութիւններ Չուիցեքիայէն, Արաբական Միացեալ Էմիրութիւններէն եւ Իրանէն ներդրողներու հետ, պատճառած են ֆինանսական անճշտութեան համար: (Արաբական Միացեալ Էմիրութիւններու դրամազուլիսով գործող կահոյքի «Քուֆորթ-էլիթ» վաճառատան սեփականատերերը նոյնպէս կը դատուին, ապօրինի առեւտուրի եւ տուրքերէ խուսափումի յանցանքին համար):

Թուրքիոյ կառավարութեան հակազդեցութիւնը, արձագանգը հրապարակաւ խլացուած է: Բայց հոկտեմբերին Թուրքիոյ խորհրդարանը Ուզպեքիստանը չնեղառեց ցանկին մէջ այն երկիրներուն, որոնց հետ կը ծրագրէ խորհրդարանական բարեկամական յանձնախումբեր կազմել: Ցանկին մէջ ներառուած են Կեդրոնական Ասիոյ միւս չորս հանրապետութիւնները:

Թրքական հաղորդամիջոցներն ու գործարարները մինչ այդ զայրացած են Թաշքենտէն:

«Յիւրիյէթ» օրաթերթին տրուած հարցազրոյցի մը մէջ (փետրուար) Վահիտ Կիւնես՝ «Թիւրքուազ» խումբի սեփականատերերէն մէկը, որ Ուզպեքիստանի մէջ վաճառատուներու վեց համալիրներ ունի, եւ որ 9 ամիս բանտարկուեցաւ եւ ապա արտաքսուեցաւ, ըսաւ, թէ Թաշքենտի մեղադրանքները անհիմն էին:

«Ուզպեքիստանի իշխանութիւնները անօրէն ձեռով գրեթէ 60 միլիոն տոլար բռնագրաւեցին», ըսաւ ան:

Ռիզա Նուր Մերալ, որ ԹԻՄՍՆՆ-ի (Թուրքիոյ գործարարներու եւ արդիւնաբերողներու համադաշնակցութիւն) նախագահն է, «Յիւրիյէթ» օրաթերթին փետրուարի վերջաւորութեան ըսաւ, որ՝ «թուրք առեւտրականներու հետ այս սխալ վերաբերմունքը անմիջապէս պետք է դադարի»:

Թաշքենտի մէջ վերլուծաբաններ կը վախսան, որ այս աղմուկը կրնայ վնասել Ուզպեքիստանի տնտեսութեան, թրքական ընկերութիւններ տիրական, յայտնի են Ուզպեքիստանի ճարտարարուեստի տարբեր մարգերու՝ իլուստրացիոն, սննդամթերքի արտադրութեան, դեղորայքի, կերպրակալ նիւթերու, շինարարութեան եւ պանդոկներու սպասարկութիւններու մէջ: Ըստ թրքական լրատու աղբիւրներու հաղորդումներուն, 1992-2010 թուականներու միջեւ թրքական շինարարական ընկերութիւնները շուրջ 1,8 միլիարտ տոլար ծախսած են Ուզպեքիստանի մէջ, եւ երկու երկիրներու միջեւ առեւտուրի արժեքը 2010 թուականին անցած է 1 միլիարտ տոլարը:

«Բազմաթիւ ուզպեքներ, որոնք կ'աշխատին թրքական ձեռնարկութիւններու մէջ, կորսնցուցին իրենց եկամուտը», ըսաւ Թաշքենտի բնակիչ մը: Ան նաեւ նշեց, թէ բազմաթիւ ուզպեքներ զայրացած են, որ կառավարութիւնը արգիւյրած է պատկերասփռումը թրքական զանաւաններու, որոնք մեծ ժողովրդականութիւն կը վայելին: Բայց շատեր կը վախսան հրապարակաւ արտայայտելու իրենց դժգոհութիւնը՝ զգուշանալով հակադարձութենէ, հատուցումէ, անպարտաւորութենէ:

Առնուազն մէկ մարդ ոչ մէկ նշան ցոյց կու տայ, որ ազդուած է այս առաջոյցն. անվտանգութիւնը: Փետրուարի վերջաւորութեան Միջազգային համագործակցութեան եւ համակարգումի թրքական գործակալութիւնը, Անգարայի բարգաւաճման թելը, յայտարարեց, որ ինչ պիտի հովանաւորէ վարժանքներու չորս դասընթացներ՝ Ուզպեքիստանի ապահովական ուժերուն համար: Դասընթացները մշակուած են՝ բարելաւելու կարողութիւնները կազմակերպուած ոճրագործութեան դէմ պայքարին մէջ:

«Թէեւ Թաշքենտ չի վստահիր Թուրքիոյ իսլամական կառավարութեան, սակայն չեմ յարաբերութիւններ ունի թրքական ապահովական ուժերուն հետ, ըսաւ Թաշքենտ տեղակայուած լրագրողը: Ապահովական կապերը ամուր կը մնան, որովհետեւ Թաշքենտ կը հաւատայ, որ Թուրքիոյ զինուորականութիւնը աշխարհիկ կարգերու կողմնակիցներուն հակակշիռին տակն է:

## «ԵՈՒՐԵՑՈՒՄԵՆ»

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդին կը յայտնենք, որ Սրբոց Յիփիսմեանց կուսանաց տօնին նուիրուած աղօթքները այս տարի տեղի պիտի ունենան չորեքշաբթի, 16 մայիսէն 4 յունիս 2012:

Կոյսերուն տօնին նուիրուած աղօթքներուն բացումը յատուկ արարողութեամբ տեղի պիտի ունենայ 16 մայիս 2012-ին, երեկոյեան ժամը 6:30-ին Սրբոց Յիփիսմեանց մատարան մէջ, Ս. Աստուածածնայ եկեղեցոյ կից:

Արարողութեան պիտի հանդիսատես եւ օրուան պատգամը փոխանցէ՝

**ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՄ ԱՐԸ. ԽԱՉԵՐԵԱՆ**  
*Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմին*

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը մասնակցելու Յիփիսմեանց նահատակութեան տօնին, որ հանդիսացաւ հայ ժողովուրդի թէ՛ ազգային, թէ՛ կրօնական դիմագիծի կազմաւորման անկիւնադարձային դէպքերէն մէկը եւ այսօր կը մնայ իրողութիւն մը, որ իր հետքերն ու ազդեցութիւնը կը շարունակէ զգացնել մեզի եւ մղել իշխանակերտ իրեն վայել արարողութիւններով:

**ԼԻԲԱՆԱՆԻ ԹԵՄԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ**

# ԱԶՐՊԵՅՃԱՆ. ՊԱԲՈՒԻ ՊԱՏԱՅԱԿԱՆ ՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ ՊԵՐԼԻՆԻ

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Կուլտո Վեստերուելի վերջերս քննադատեց Ազրպեյճանի մարդկային իրաւանց խախտումներուն ցուցանիշը: Մայիսին Պաքոյի մէջ տեղի ունենալիք «Եւրոտեսիլ» երգի մրցումէն առաջ կատարուած այս քննադատութիւնը զայրոյթը յառաջացուց Պաքոյի մէջ, որուն արձագանգը հանդիսացան կառավարութեան հովանաւորած լրատու միջոցներու խմբագրականները:

Այս տարուան «Եւրոտեսիլ» երգի մրցումին բացման տեսարանը բառերու պատերազմ մըն է: Յիւրընկալող երկրին՝ Ազրպեյճանի մէջ պետական վերահսկողութեան տակ գտնուող լրատու աղբիւրները յարձակում կը շղթայագրեծեն Գերմանիոյ դէմ, բողոքելով, որ Պերլին «լայնածիր արշաւ» մը ետին է քաղաքականացնելու համար «Եւրոտեսիլ»-ի ձեռնարկը եւ վարկաբեկելու Պաքոյն:

Նախագահ Իլիւհմ Ալիւի վարչակազմը կ'ուզէ Եւրոտեսիլ»-ի մրցումը օգտագործել (Ձեռնարկ մը, որուն պիտի հետեւին անելի քան 100 միլիոն անձեր), իբրեւ հասարակութեան հետ կապերու ցատկահարթակ՝ Ազրպեյճանի միջազգային դիմագիծը բարձրացնելու համար: Մինչդէռ մարդկային իրաւանց պաշտպան միջազգային գործիչներ տեղական քաղաքացիական հասարակութեան ջատագովներուն հետ կը յուսան, որ «Եւրոտեսիլ»-ը կ'օգնէ ամբողջ աշխարհին ուշադրութիւնը կեդրոնացնելու համար Ազրպեյճանի չարագուշակ մարդկային իրաւանց ցուցանիշին վրայ: «Եւրոտեսիլ»-ի կիսաարտակալն ու արտաքականը տեղի պիտի ունենան Պաքոյի մէջ, մայիսի վերջաւորութեան:

Վերջերս, հաւանաբար Ազրպեյճանի ժողովրդական վարչապետ Գերմանի Սարգսյանը ցուցանիշին ամենէն հնչեղ քննադատութիւնը եկաւ Գերմանիայէն: Արդարեւ, գերմանական լրատու հիմնական գործակալութիւններ, ներառեալ՝ «Շփիլը Օւլայն» եւ «Տայ Տէյթ», գրեթէ ամէն օր լուսարձակի տակ կ'առնէն Ազրպեյճանի մէջ անհատական ազատութեան եւ քաղաքական բազմակարծութեան բացակայութիւնը: Կարգ մը լրատու աղբիւրներ մարդկային իրաւանց պաշտպան գործիչներու հետ փորձած են «Եւրոտեսիլ»-ը պայքարի ենթարկելու աջակցութիւն թմբկահարել:

«Գերմանական հրատարակութիւններ, ինչպէս՝ «Շփիլը», եղած են ամենէն համարձակ եւ բացայայտը Ազրպեյճանի սեփական կացութիւնը ներկայացնելու մէջ», ըսաւ Լէյլա Ալիւեա, որ Պաքոյի Ազգային եւ միջազգային ուսումնասիրողութիւններու կեդրոնին նախագահն է:

Գերմանացի կառավարական պաշտօնատարներ նոյնպէս քննադատութեան թիրախ դարձուցած են Ալիւի վարչակազմը: Մարտին արտաքին գործոց նախարար Կուլտո Վեստերուելլէ հաստատեց «Եւրոտեսիլ»-ը օգտագործելու գաղափարը, որպէսզի ժողովրդավարացման համար Ազրպեյճանի վրայ ճնշում բանեցան:

«Մենք այս առիթները պետք է օգտագործենք ստեղծելու համար... մեր ժողովրդավարական արժեքները յառաջացնելու հրապարակային, հանրային քննադատական ատ-

եան», ըսաւ Վաթերուելլէ: Գերմանիոյ արտաքին գործոց նախարարը, սա-

նադրամը եւ Կանաչներու կուսակցութեան անդամ երեսփոխան Կուլա վոն



Վեստերուելլէ եւ Ալիւի Պաքոյի մէջ, մարտ 2012-ին

կայն, ընդդիմացաւ պայքարին:

Գերմանիոյ կառավարութեան մարդկային իրաւանց հարցերու ներկայացուցիչ Մարցուս Լեւինկ Պերլինի մէջ Պաքոյի ամենէն հետեւողական քննադատն է:

«Ազրպեյճանի կառավարութիւնը պետք է յարգէ մարդկային իրաւունքները: Կառավարութիւնը գործիչներուն չափազանցուած ուշադրութեան ոչ քաղաքական գործիչներու, մասնաւորաբար Ալի Քերիմլիի՝ Ազրպեյճանի ժողովրդային ճակատ կուսակցութեան ղեկավար, եւ Իսա Կամալարի՝ ղեկավարը Մուսաւաթ կուսակցութեան:

Նեման հիմնադրամն ու այլ հիմնարկներ, որոնք առնչակից են գերմանական քաղաքական կուսակցութիւններու, «գործուն դերակատարութիւն կ'ունենան ֆինանսաւորելու համար ընդդիմութիւնը եւ միջազգային բեմին վրայ Ազրպեյճանի մասին ժխտական կարծիք ստեղծելու մէջ», կը նշէ մեկնաբանութիւնը:

Մինչ Պաքոյի մէջ որոշ մասնագետներ կը հաւատան, որ բաւական ժամանակ պիտի առնէ գերմանական վարչապետներու յարաբերութիւնները բնականոնացնելը. չի սպասուիր, որ շարունակուող հռետորական կռիւլը խանձաբոց Պաքոյի յարաբերութիւնները Եւրոպական Միութեան հետ:

«Պաքոյ վստահ է, որ մի քանակ անոնք չկայ... Եւրոպական Միութեան անդամ երկիրներու միջեւ», ըսաւ Ալիւեա:

## «ԵՈՒՐԵՑՈՒՄԵՆ»

### ԿՈՒՉՈՒԻ

●Սեւուական Արաբիոյ համար ընդհանուր վերակազմ մը (իգական սեռի)՝ «House keeping manager», վարձատրութեան լաւ պայմաններ: Դիմել՝ հեռաձայնելով 76-026912 թիւին:

### ԾԱԽՈՒ Է

●Պալիմի մէջ գեղատեսիլ յարկաբաժին մը, 140 մ, 3-րդ յարկ, մէկ կառուուան եւ մառան: Հեռ. 76-400922:

### ԿՈՒՉՈՒԻ

●Հաստատութիւն մը կարիքը ունի քարտուղարուի մը՝ կիսամամ դրութեամբ: Դիմել՝ հեռ. 03-286321:

**ՎԵՐՋԵՐՍ ԶԱՅՈՑ ԾԵՂԱՍԱԿՆՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԴԻՄՆԱՐԿԻՆ ՄԵՋ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԵՍԱՒ «ԳԻՐՔԸ ԻՐԵՄԻ ԾԵՂԱՍԱԿՆՈՒԹԵԱՆ ՎԿԱՅ» ՑՈՒՑԱՐԴՈՒԹԻՒՆԸ**

Վերջերս Յայոց ցեղասպանության թանգարան-հիմնարկին մեջ գրատպության 500-ամեակին և ԵՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանում գիրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակություն ամփոփ ներկայացուցեցաւ «Գիրքը իբրեւ ցեղասպանության վկայ» ցուցադրութիւնը:

Յայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Յայկ Դեմոյեան իր բացման խօսքին մէջ ընդգծեց, որ ցուցահանդէսին մէջ ներառուած են մօտաւորապէս 300 հնատիպ եւ սկզբնաղբիւրային նշանակութիւն ունեցող տպագիր միատրոններ:

«Ցուցադրութեան մէջ ներկայացուած գիրքերը բաշխուած են տարբեր խորագիրներու տակ: Թանգարանի սրահներուն մէջ ներկայացուած են՝ ճանապարհային նոթեր, դասագիրքեր, արեւմտահայոց հասարական, մշակութային եւ գործարար կեանքին վերաբերող եզակի հրատարակութիւններ», նշած է Յ. Դեմոյեան:

Ըստ Յայոց ցեղասպանութեան թանգարանի գիտաժողովին, Յայոց ցեղասպանութեան թանգարան-հիմնարկին իրենց ցուցաբերած աշակցութեան եւ Յայոց ցեղասպանութեան ուսումնասիրութեան ոլորտին մէջ իրենց ունեցած աւանդին համար Ռալֆ Երիկեան, Ճեֆրի Ռոպերթսոն եւ Եուսի Պերոն արժանացած են «Ֆրիտեոֆ Նանսեն»-ի ոսկե մետալին, որ հրապարակուած է «Երախտագիտութիւն» անուանակարգով:

«Վիվասել-Էւ.Թի.Էս.»-ի տնօրէն Ռալֆ Երիկեան լրագրողներու հետ մամուլային ընթացքին վստահեցուցած է, որ եթէ թուրքերը գիտնային, թէ հայերը ինչպէ՞ս պիտի փորձեն ձեռք ձգել այդ վաւերագիրները եւ վերահաստատեն իրենց ճշմարտացիութիւնը, կարելիութիւնը կար, որ չհրականացնէին այդ ճորագործութիւնները, որ կատարած են Եղեռնին:

Հարողոյնք, որ ցուցահանդէսին բացումը կատարուեցաւ 23 ապրիլին եւ պիտի ցուցադրուի երեք ամիս:

**ՄԱՐԻ ՈՂՁ ԱՊՐՈՒԵՑԵԱՆ «ՏԻԳՐԱՆ ՄԵՑ» ՄԵՆԱՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԻՆՈՎ ԲԵՄ ՊԻՏԻ ԲԱՐՁՐԱՅՆԸ 14 ԿԵՐԱՎՈՐ**

Սան Ֆրանսիսքո բնակող դերասանուհի Մարի Ռոզ Ապուստոլեան 21 մայիսին Սթանիսլաւսկի անուան ռուսական տրամաթիքական թատրոնի բեմին վրայ պիտի ներկայացնէ «Տիգրան մեծ» մեաներկայացումը, որ երկու արարով է: Նշենք, որ թատրոնագութեան հեղինակը եւ բեմադրիչը դերասանուհին է:

«Տիգրան մեծ» մեաներկայացումը հիմնուած է Պերո Զեյթունցեանի «Աստուծոյ տասներկու օրը» թատրերգութեան, հայոց պատմութեան եւ Մարի Ռոզի մտորումներուն վրայ: Այս մեաներկայացումով դերասանուհին առանձին պիտի մարմնաւորէ 14 կերպարներ:

Մարի Ռոզ Ապուստոլեան խախտող տարի Երեւանի մէջ ներկայացուցած էր Փրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրերը» մեաներկայացումը: Ան թատերական կրթութիւնը ստացած է Երեւանի Գեղարուեստական-թատերական հիմնարկին մէջ: Երկար տարիներ աշխատած է Երեւանի տրամաթիքական՝ այժմ Յրաչեայ Ղափանեանի անուան թատրոնին մէջ: Բազմաթիւ դերեր ստանձնած է պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի գրական-թատերական հաղորդումներուն ընթացքին: Մարի Ռոզ Ապուստոլեան 1983-էն ի վեր կ'ապրի Սան Ֆրանսիսքո:

**ՇՈՒՅԻ ԱԶՏԱՍԳՐՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄՑ ՊԱՍՏԱՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՐԴԱՆԴԵՍ**

Մայիս 8-ին Շուշիի ազատագրութեան 20-ամեակին նուիրած ցուցահանդէսին բացումը կատարուեցաւ Երեւանի Գեղարուեստի պետական ակադեմիայի «Ալպերթ եւ Թովե Պոյաճեան» ցուցասրահին մէջ:

Ըստ ձեւաւորման ամպիոնի վարիչ, փրոֆեսոր Գագիկ Գեորգեանի, ցուցահանդէսին իրականացման համար բաժնի ուսանողները աշխատած են մեծ ռեզուրուութեամբ: «Ճիշդ է, որ Նախաձեռնութիւնը եղած էր մեր կողմէ, սակայն ուսանողները մեծ աշխուժութեամբ մասնակցած են, եւ այստեղ ներկայացուած են միայն Ա. եւ Բ. տարուան ուսանողներու աշխատանքները», յայտնած է Գ. Գեորգեան:

Ձեւաւորման բաժանմունքի ուսանողներէն Չաւէն Մարուխեան իր պատասխան վրայ ներկայացուցած է Լեռնային Ղարաբաղի քարտէսը՝ մետալ Շուշիի տեսքով: Ան ըսած է, որ՝ «Շուշին ներկայացուցած եմ մետալի տեսքով, որովհետեւ իւրաքանչիւր մարտիկի, կռուողի համար անկա եղած է պարգեւ, եւ փափաքս է, որ մարդիկ տեսնեն, յիշեն եւ հպարտանան Շուշիի յաղթանակով», եզրակարգած է ան:

Յիշեցնենք, որ ցուցահանդէսին ներկայացուած է մօտաւորապէս 50 պատանո՝ Շուշիի ազատագրութեան 20-ամեակին նուիրած:

**«ՎԻՎԱՍԵԼ-ԷՍ.ԹԻ.ԷՍ.»-Ը ԱՌԱՅՆՈՐԴՆԵՐՈՒ ԴՊՐՈՑԻ ՈՒՍԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԵՍ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

«Վիվասել-Էւ.Թի.Էս.»-ի տեղեկատուական բաժանմունքէն տեղեկացուցին, որ ընկերութեան կառավարման ձեւը կը շարունակէ իբրեւ օրինակ ծառայել ապագայ մասնագետներուն համար, որոնք տեսական գիտելիքը գործնականով հարստացնելու հարցին մէջ արդիւնաւետ կը համարեն Յայաստանի մէջ հեռահաղորդակցութեան առաջատար ընկերութեան՝ «Վիվասել-Էւ.Թի.Էս.»-ի կառավարման փորձը:

«Աշխատանքային առողջ միջավայր, նոր չափանիշ սահմանելու համարձակութիւն, բարոյական արժէքներով առաջնորդուելու կամք, պատասխանատուութիւն եւ արդիւնքի հասնելու հետեւողականութիւն» մօտաւորապէս այսպիսին պէտք է ըլլայ այն կազմակերպութեան ռազմավարութիւնը, որ կը ձգտի ըլլալ առաջատար եւ առաջնորդել իր օրինակով, յայտնած է Առաջնորդներու դպրոցի ուսանողներուն «Վիվասել-Էւ.Թի.Էս.»-ի գլխաւոր տնօրէն Ռաֆի Երիկեան:

Նշենք, որ «Վիվասել-Էւ.Թի.Էս.»-ը կառավարման գործիքներու ընտրութեան հարցին մէջ կարեւոր կը համարէ աշխատակիցներու մասնագիտական իրական կարելիութիւններու բացայայտումը եւ ղեկավարի դերը գնահատելու կարողութիւնը: Ապագայ մասնագետներու հետ հանդիպման ընթացքին ներկայացուած է կառավարման համակարգուած մօտեցման առաւելութիւնը եւս:

**ԼՈՅՍ ՏԵՍԱՍԸ Ե ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՅԻ ՆՈՐԱՅԱՅՑ ԱՆՏԻՊ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ՝ «ԳԻՐՔ ՄՆԱՑՈՐԴԱՅ»**

«Նայիրի» հրատարակչութիւնը, Դաւիթ Գասպարեանի աշխատասիրութեամբ, լոյս ընծայած է Եղիշէ Զարենցի «Գիրք մնացորդաց» անտիպ ժառանգութիւնը, Երեւանի մէջ, 2012-ին, 440 էջով եւ 500 օրինակով:

Գիրքը կ'ընդգրկէ Եղիշէ Զարենցի նորայայտ անտիպ ժառանգութիւնը: Հրատարակութիւնը կը նպատակադրէ այս հատորներով ամփոփել եւ գրասէր հանրութեան տրամադրութեան տակ դնել մեծ գրողին վերջին տարիներու հարուստ վաստակը, որ ցրուած վիճակի մէջ մնացած էր:

Գիրքին սկիզբը տեղ գտած է Դ. Գասպարեանի «Զարենցի ձեռագիրներու եւ յարակից հարցերու մասին» ծաւալուն նախաբանը: Ժողովածուն բաղկացած է հետեւեալ բաժիններէն՝ «Պոեմներ, «Բանաստեղծութիւններ», «Պաշտօնական գրութիւններ», «Չաւազան գրութիւններ», «Նամակներ, հեռագրեր», «Մակագրութիւններ, ընծայագրեր», «Պատառիկներ», «Թարգմանութիւններ», «Կենսագրական վաւերագրեր», «Ծանօթագրութիւններ, մեկնաբանութիւններ, քննադրային տարբերութիւններ»:

Անկէ ետք գետնորած է «Անհատականութիւն եւ ստեղծագործական ազատութիւն» ուսումնասիրութիւնը: Գիրքը կ'արարուի Ե. Զարենցի կեանքի եւ ստեղծագործութեան համառօտ ներկայացումով:

«Գիրք մնացորդաց»-ը գիտական հրատարակութիւն է, որ նուիրուած է Եղիշէ Զարենցի ծննդեան 115-ամեակին եւ հրատարակուած է պետական պատուերով:

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ԶԱՄԱՅԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԱՆ ՎԵՐԱՆՈՐՈՎՍԸ Ե ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԻՑ ԾԵՐԱՆՈՒՄԻՆ ՄԵԿ ԲԱԺԻՆԸ**

«Հայաստան» համահայկական հիմնադրամը փետրուարին աւարտեց Երեւանի Նորքի ծերանոցին Ա. մասնաշէնքին 3-րդ եւ 4-րդ յարկերուն ամբողջական վերանորոգումը: Նորոգուած են նաեւ էլեկտրական, ջրամատակարարման եւ կոյուղիի համակարգերը: Ծրագիրը ֆինանսաւորած է «Հայաստան» համահայկական հիմնադրամին Թորոնթոյի մարմինը:

Նորքի ծերանոցը 1989-1990-ի կառոյց է:

Վերանորոգման աշխատանքները ուղղուած են հաստատութեան համընդհանուր արդիականացման: Ներկայիս ծերանոցին քառաշարկ երկու մասնաշէնքերուն մէջ կը բնակի 65 տարիքէն վեր 230 տարեք, որոնց 130-ը կիներ են: Տնօրէն Արթուր Մելքոնեանի փոխնախագահը, վերջերս ամուսնացած երկու զոյգերուն սենեակներ տրամադրուած են վերանորոգուած յարկաբաժիններուն մէջ:

Տարեցներուն համար կը կազմակերպուին զանազան ձեռնարկներ, իսկ փետրուարին, տնօրէնութեան Նախաձեռնութեամբ, կազմակերպուեցաւ 78 տարեցներու աչքի անվճար ստուգում:



Նշենք, որ նորոգուած յարկաբաժինները եւ տնօրէնութեան միջոցներով վերանորոգուած ճաշարանը եւ ժամանցի սրահը առաւել բարեկարգատ պայմաններ ստեղծած են մեծահասակներուն հանգիստին համար:

**ՄԵԼ ԿԻՊԱՆԸ ՊԻՏԻ ԿԿԱՐԱՅԱՆԸ ԿԱՐԱՆԱՆՑ ԶԵՐՈՍԱՄԱՐՏԸ**

Հոլիվուտի հետ համագործակցաբար Յայաստանի մասին պատմական ժապաւեն նկարահանելու մասին արդէն հայ գործարար մը համաձայնութիւն կայացուցած է աշխարհահռչակ բեմադրիչ եւ դերասան Մել Կիպսընին հետ: Այս մասին յայտարարած է Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսեան, Հայաստանի մէջ խորհրդարանական ընտրութիւններուն առաջ, Հայաստանի մշակոյթի, արուեստի եւ գիտութեան ներկայացուցիչներուն հետ ունեցած հանդիպումին ընթացքին:

«Ես ինչպէս եմ հայ գործարար մը, որ ունի նախնական համաձայնութիւն Մել Կիպսընին հետ: Կը յուսամ, որ ան այս տարի կու գայ Հայաստան եւ միասին կը ընկերակցեն այդ համաձայնագրին հետագայ կեանքը», ըսած է Նախագահը: Ան վստահեցուցած է, որ ժապաւենին ինչպէս պիտի ըլլայ Վարդանանց հերոսամարտը եւ հաւանաբար անկա կ'ը «Բիւզանդիայէն արեւելք» խորագիրը:

**«ՈՍԿԷ ԾԻՐԱՆ» 9-ՐԴ ԵՐԵՎԱՆԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՄԱՊԱՏՎԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ 8-15 ՅՈՒՆԻՍ «ՈՍԿԷ ԾԻՐԱՆ» 9-ՐԴ ԵՐԵՎԱՆԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ շարժապատկեր**

րի փառատօսին մասնակցութեան դիմում ներկայացնողներուն թիւը աննախընթաց կերպով մեծ եղած է: Արդարեւ, այս տարի 70 երկիրներէ 1120 դիմում ներկայացուած է: Փառատօսային ծրագիրին ընթացքին մրցումները կը մնան նոյնը՝ «Միջազգային խաղարկային», «Միջազգային վաւերագրական», «Հայկական համայնապատկեր» եւ Կորիզ»:

11 մայիսի լրագրողներու հետ ունեցած ասուլիս ընթացքին Յայաստանի մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեան նշած է, որ փառատօսը այս տարի պիտի ունենայ հարուստ եւ հետաքրքրական ծրագիր: «Այս տարի ամրան եւս Երեւանը պիտի ըլլայ բազմամարդ եւ պիտի տիրէ հետաքրքրական եւ ջերմ մթնոլորտ», հաստատած է նախարարը՝ անլեցնելով, որ այս տարուան տնօրէնը պիտի ըլլայ «Գիրք եւ շարժապատկեր» ծրագրի իրականացումը:

«Ոսկէ Ծիրան» երեւանեան միջազգային շարժապատկերի փառատօսի տնօրէն Յարութիւն Կապտրեան տեղեկացուցած է, որ ներկայացուած դիմումներէն լաւագոյնները ընտրուած են: Ան դիտել տուած է, որ անոնց կարգին են այն ժապաւենները, որոնք գիրքերու հիման վրայ պատրաստուած են: Ան նշած է նաեւ, որ փառատօսին բացումը պիտի կատարուի 8 յուլիսին «Ֆաուսթ» ժապաւենին ցուցադրութեամբ: Երեւանեան մէկ շաբթուան փառատօսի ծիրին մէջ այս տարի եւս 6-րդ անգամ ըլլալով պիտի կազմակերպուի «Բեմադրիչներ առանց սահմաններու» միացեալ արտադրութեան ֆորումը, որ հաւանաբար կայանայ «Շարժապատկերի լրագրութիւն առանց սահմաններու» խորագիրով դասընթացքի միջազգային բարձրակարգ մասնագետներու եւ շարժապատկերի քննադատներու մասնակցութեամբ:

**«ԴԱՍԱԿԱՆ ԵՐՈՒՏԵՍԻԼ 2012»-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԳՐԱՒԵՑ 3-ՐԴ ԴԻՐՔԸ**

«Դասական Եւրոտեսիլ 2012» մրցումը տեղի ունեցաւ 11 մայիսին, Վիեննայի «Ուաթիաուզ» հրապարակին մէջ: Մրցումին Հայաստանը ներկայացուց 15-ամեայ քանոնահար Նարէկ Կազազեանը, որ գրաւեց 3-րդ դիրքը:

Գոհար Գասպարեան, որ Վիեննայի մրցումին հայաստանեան պատուիրակութեան պատասխանատու էր, մամուլային ասուլիսի ընթացքին հաղորդած է, որ մրցումին սահմանուած էր երեք մրցանակ միայն: Ի տարբերութիւն «Եւրոտեսիլ»-ի միւս մրցումներուն՝ «Դասական Եւրոտեսիլ»-ին շահողը ընտրուած է ոչ թէ հեռուստադիտողներու եւ դատական կազմի քուէարկութեան յիստուն-յիսուն յարաբերակցութեամբ, այլ՝ միայն հինգ անդամներէ բաղկացած դատական կազմի մը կողմէ:

Մրցումին Ն. Կազազեան ելոյթ ունեցած է 6 թիւին տակ՝ նախորդելով 7 թիւին տակ հանդէս եկող Նոյնպէս հայ ազգի գաւակ, սակայն Աւստրիան ներկայացնող ջութակահար Էմանուէլ Ծգաւտրեանին, որ գրաւած է մրցումին 2-րդ դիրքը: Իսկ մրցումին առաջնութիւն շահած է Նորվեգիոյ ներկայացուցիչ՝ ջութակահար Էյվինտ Յոլցմարք Ռիկսթանտինը:

1982-էն ի վեր երկու տարի անգամ մը Վիեննայի մէջ իրականացուող միջազգային պատկերասփիւռային երաժշտական թիւով 16-րդ մրցումին Հայաստանը իր դասական Եւրոտեսիլեան կենսագրութեան մէջ կը մասնակցի առաջին անգամ:

Յայտնենք, որ «Դասական Եւրոտեսիլ 2012»-ի մրցումին Հայաստան մասնակցած է Հայաստանի մշակոյթի նախարարութեան եւ Հայաստանի Հանրային հեռուստաընկերութեան աջակցութեամբ:

**«ՎԻՎԱՍԵԼ-ԷՍ.ԹԻ.ԷՍ.» ԿԸ ՀՈՎԱՆԱՊՐԸ «ԲԱՐԵՎԱՍՈՒԹԻՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ԶԱՄՈՅՔԻՆ ԶԵՐՈՍԱԿԱՆ ԶԱՄԵՐՈՎԱԾՐԱՆԸ**

«Վիվասել-Էւ.Թի.Էս.» ընկերութիւնը կը տեղեկացնէ, թէ պիտի հովանաւորէ Պարի միջազգային օրուան նուիրուած՝ «Բարեկամութիւն» պետական անսամալի հերթական ելոյթը: Համոյթը 25 տարիէ կը վայելէ հանդիսատեսի համակրանքը:



Համոյթը իր կատարումներով հանդէս եկած է Գերմանիոյ, Միացեալ Թագաւորութեան, Ռուսիոյ, Ֆրանսայի, Չինաստանի եւ այլ երկրներու բեմերուն վրայ:

«Վիվասել-Էւ.Թի.Էս.»-ի գլխաւոր տնօրէն Ռալֆ Երիկեան նկատել տուաւ, որ ընկերութիւնը կը քաջալերէ արուեստի «ղեկավարներու» գործունեութիւնը՝ հայու ինքնութիւնը պահպանելու եւ սերունդներուն փոխանցելու համար:

Հայկական պարերը բեմադրուած են Կոմիտասի, Սայաթ Նովայի, Արամ Խաչատրեանի, Առնօ Բաբաճանեանի, Տիգրան Մանուկեանի եւ հայ մեծանուն երաժիշտներուն ստեղծագործութիւններուն եւ մշակումներուն հիման վրայ:

**Պատրաստեց՝ ՄԱՐԻՆԱ ԶԱՄԱՐՏԵԱՆ**

Advertisement for Viva Cell and MTS mobile services, featuring the logos of both companies.

«ԱԶԳԱԿ» ՈՒԹՍՈՒՆԴԻՆԳ ՏԱՐԻՆԵՐՈՒ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԴՄԵՁԵՆ

ԷՇՐԵՖԻԵԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻՆ ԿԱԶՄԱԴՈՐՈՒՄԸ ԵՒ ՄԵԾ ՀԻՒՂԱԲԱՆԻՆ ՀՐԿԻՉՈՒՄԸ

Պեյրուֆի Զեմփերուն մեջ տեղադրուած գաղթական հայրութիւնը աստիճանաբար սկսած էր դուրս գալ եւ տարածուիլ Պեյրուֆի եւ շրջակայքին մէջ: Հետզհետէ, հայաբնակ նոր թաղամասեր հիմնուեցան:

Պեյրուֆի արեւելեան կողմը Էշրեֆիի գեղատեսիլ եւ ծովահայեաց բարձունքն է, որուն հասնողիկապէս կողմը կ'երկարի Պրումմանայի, Պեյթ Սերիի եւ Պիաննէի լեռնաշղթան, իսկ վարը Պուրճ Համուտի դաշտագետինն է: Էշրեֆիէ հանդարտ, ծաղկուն եւ բարեկեցիկ թաղամաս էր. քարակերտ բնակարաններու շարքին կային վիլլաներ, ապարանքներ պարտեզներով եւ ծաղկատաններով եզերուած: Հին կալուածներ եւ ապարանքներ ունէին քրիստոնէայ Սուրսոք եւ Թապէթ ընտանիքները:

Հայ գաղթականները տեղադրելու համար ֆրանսական բարձր ընդհանրութեան եւ միջազգային կարմիր խաչին Սուրիոյ ներկայացուցիչին հովանաւորութեամբ յանձնախումբ մը կազմուած էր: Այդ յանձնախումբը Էշրեֆիի բարձունքին վրայ ընդարձակ հողատարածք մը գնեց եւ երեք հարիւր բնակարաններու կառուցման որոշում առաւ, հայկական առանձին թաղամաս մը ունենալու նպատակով:

Այսպիսով, քեմփերէն դուրս գալով, հետզհետէ հայ ընտանիքներ սկսան կեդրոնանալ Էշրեֆիի մէջ:

Նոյն ժամանակ հայ կաթողիկէ համայնքը ընդարձակ կալուած մը գնեց հին, ուր հետագային եկեղեցի եւ պատրիարքարան կառուցուեցաւ: Անտարանական համայնքն ալ կալուած մը գնեց:

Գաղթականներուն օգնելու նպատակով Ազգերու դաշնակցութիւնը մատուորապէս երկու հարիւր բնակարաններ կառուցեց Էշրեֆիի մէջ, ուր տեղադրուեցան հայ ընտանիքներ:

Իր կարգին գաղթականաց յանձնախումբը 250 ընտանիքի տեղադրման համար Էշրեֆիի ծայրամասին տողատարածք մը գնեց: Հին կազմաւորուեցաւ: Սպիտակ տուններ անուանով ճանաչուած թաղամասը: Չոյզ սենակներ բաղկացած այդ բնակարանները յարմարաւէտ կացարաններ էին քեմփերէն ելած ժողովուրդին համար:

Էշրեֆիի բարձունքն ղեպի ձախ երկարող վայրէջքը թփուտներով եւ ծառատաններով ծածկուած ամայի եւ անմարդաբնակ գոտի էր: Զանի մը տասնակ հայ ընտանիքներ այդ հողերը գնելով թփուտները մաքրեցին եւ բնակարաններ կառուցելով փոքր թաղամաս մը հիմնեցին: Այդ շրջանը կոչուեցաւ Սեփէթ Տուրմագ:

Էշրեֆիէ մէջ կեդրոնացած հայ ընտանիքները 1929-ին յանձնախումբ մը կազմեցին եւ 3251 կանգուն տարածութեամբ հողատարածք մը գնեցին, ուր 1932-ին փայտաշէն Սուրբ Աստուածածին եկեղեցին եւ դպրոց կառուցեցին: Հետագային եկեղեցին քակուեցաւ եւ 1955-ին կառուցուեցաւ ներկայ սուրբ Յակոբ եկեղեցին:

\* \* \*

Զեմփերու բնակիչներ թեւ աստիճանաբար սկսած էին տարածուիլ ղեպի շրջանները, բայց ժողովուրդին մեծամասնութիւնը տակաւին վրանաքաղաքի բնակիչ էր: Լիբանանահայ գաղութի պատմութեան տարեգրութեան մէջ կարելու անդրադարձ մը եղաւ մեծ հիւղաւանին հրկիզումը՝ 31 յունուար 1933-ին: Ողբերգութիւնը ահաւոր էր: Արդէն իսկ թշուառութեան մէջ ապրող ժողովուրդը անպատասպար մնաց եւ մոխիրի վրայ նստաւ:

Վրանաքաղաքի ողբերգութեան «Ազգակ» կ'անդրադարձնայ 1 փետրուար 1933-ին, «սրտաճմլիկ ողբերգութիւն մը Ս. Խաչ հիւղաւանին մէջ» խորագիրով:

«Երէկ գիշեր, ժամը 9:00-ին սկսող հրդեհը երեք ժամուան միջոցին մոխիրի վերածեց Պեյրուֆի ամենամեծ եւ ամենահին հիւղաւանը, որ կը գտնուի հանրակառուցիչ ընկերութեան կից եւ կը բաղկանայ 600 տախտակաշէն հիւղակներէ:

Անկարելի է առանց արցունքի նկարագրել այն սրտակեղեք տեսարանը, որ պարզեցին մեր աղէտեալ հայրենակիցները, ցրուած դաշտի վրայ, կորսնցուցած իրենց սրտահատորները եւ զրկուած իրենց ունեցած խրճիթներէն ու գոյքերէն: Անբաղդատելի արագութեամբ յառաջացող կրակը կը վախեր ամեն ինչ եւ շուարման կը մատնէր բոլորը: Մէկը, իր գոյքերէն գոնէ մաս մը ազատելու նպատակաւ նետուած էր բոցերու մէջ, ուրիշ մը ղեպի իր բնակարանը երկարող կրակը մարելու դիտումով գործի լծուած էր, մայր մը սրտաճմլիկ աղաղակներ կ'արձակէր եւ կը փնտռէր իր գաւակները, ծերեր ու պառանքներ թափ տուած իրենց սրունքներուն դուրս կը թափուէին հրկիզուած վայրերէն: Ստուարաթի ժանտարմաներ, գինուորներ եւ ոստիկաններ շղթայ կազմած կը հսկողին եւ չէին թող տար որ իրարանցումներ եւ անկարգութիւններ ըլլան: Շուտով բացօդեայ դաշտը գրաւուեցան աղէտուած հայրենակիցներու կողմէ եւ ամեն ոք պահ մը մոռցած իր ենթարկուած դժբաղդութիւնը, սկսաւ փնտռել իր սրտահատորները, որոնք իրարանցման միջոցին կորսնցուցած էին բազմութեան մէջ:

**Ինչպէ՛ս եւ ուրի՛ք սկսաւ հրդեհը**  
Ժամը 9:00-ին, Ս. Խաչ եկեղեցւոյ մօտ գտնուող եւ Մանուկ Չոլաքեանի պատկանող փունճն կը սկսի կրակը: Կը շանան մարիւ, մարդիկ կը հաւաքուին, սակայն բոցը կը սկսի բարձրանալ եւ բարձր ներսիները դուրս կը թափուին: Շուտով կը բռնկին ներսը գտնուող ալիւրի պարկերը, տախտակները եւ անկարելի կ'ըլլայ մօ-

տենալ: Զանի մը վայրկեանի մէջ արդէն փուռը իրոյ ճարակ կը դառնայ:

Սակայն, դժբախտաբար, կրակը չի սահմանափակուիլ միայն փուռով եւ կայծերն ու բարձրացող բոցերը կը կրակեն անմիջապէս մօտիկը գտնուող հիւղակները: Այն ատեն կը զգացուի աղէտի ծանրութիւնը եւ կը բարձրանան աղաղակները: Հիւղաւանի դիմացի շէնքի մը մէջ բնակող Պեյրուֆի ընդհ. դատախազը տեսնելով կրակը, իսկոյն կը հեռաձայնէ ոստիկանութեան, կը հասնին մեծ թիւով ոստիկաններ, հրշէջներու ամբողջ գունդը եւ գործի կը սկսին: Մինչ այդ սակայն, հրդեհը տարածուած էր, շնորհիւ օդի նպաստաւոր հոսանքին, մինչեւ հանրակառուցիչ ընկերութեան ելեկտրակայանը եւ կը սպառնար ընկերութեան հաստատութիւններուն: Հրշէջները իրենց բոլոր ուժերը կեդրոնացուցին այն կետին վրայ, ուրկէ կը յուսային արգիլել հրդեհի երկարումը հանրակառուցիչ ընկերութեան շէնքերէն ներս: Եւ երբ բոլորի ուշադրութիւնը դարձած էր այդ կետի վրայ, առիթն կրակը անողոք կերպով կը փճացներ մնացած հիւղակները:

**600 հիւղակներ մոխիր կը դառնան**

Գիշերը, քաղաքի բոլոր կողմերէն մարդիկ կը փութային աղէտի վայրը: Հոգեւորը եւ ազգային իշխանութեան ներկայացուցիչները, խնամատարական մարմնի անդամները, բոլորը հոն էին: Ժամը 12:00-ին առանց բացառութեան հիւղաւանի 600-ի մօտ բնակարանները մոխիրի վերածուած էին եւ միայն թանձր մուխը կը բարձրանար ղեպի երկինք: Ս. Խաչ եկեղեցին, առաջնորդարանի շէնքը, Անդրանիկեան մանկապարտեզը, վարժարանի շէնքերը, ազգապատկան խանութները ու բնակարանները, բողոքականաց ժողովատեղին, իրոյ ճարակ դարձած եւ տեղերն իսկ անճանաչելի եղած էին: Ս. Խաչ եկեղեցւոյ մօտ գտնուող շուկան, մեծ մասամբ իրենց պարունակութիւններով մոխիրի վերածուեցաւ: Եկեղեցական թանկարժէք անօթներ միայն կարելի եղաւ ազատել. մնացած բոլոր գոյքերը հրդեհուեցան:

Ժամը 12:30-ին տխրատեսիլ ւերակի մը վերածուած էր Ս. Խաչ եկեղեցւոյ թաղը եւ մուխը միայն քուլայ քուլայ կը բարձրանար լզելու երկինքի երեսը, որ այդ գիշեր այնքան մութ էր եւ տխուր...:

**Բ. - Զոմփերը՝ աղէտին վայրը**

Աղէտի լուրը առնելուն պէ՛ս՝ Ս. Վ. Բարձր ըմփերտ արն. Բոնսո կը փութայ աղէտին վայրը եւ աշքերով կը տեսնէ դժբախտութիւնը: Չափազանց յուզուած եւ ազդուած տեսարանի ողբերգականութենէն, արն. Բոնսո, իսկոյն կը հրամայէ բանալ Զարակիսիայի դռները յատկացուելու համար դաշտի վրայ մնացած անպատասպար ու ցրտահար աղէտեալներուն: Միւս կողմէ Ս. Վսեմութիւնը կը հրամայէ տեղական կառավարութեան անմիջական օգնութեան փութալ:

Հնարաւոր չըլլալով սակայն գիշերուանց տեղադրուած աղէտուած հայրենակիցներու, որովհետեւ ոչ ոք կ'ուզէ հեռանալ իր աւերակ ու խրճիթի քովէ:

Այստեղ երախտագիտութեամբ պետք յիշել նաեւ, որ գտնուեցան բազմաթիւ տեղացիներ ալ, որոնք չափազանց զգացուած դժբախտութեան տեսարանէն, առաջարկած են տուն ու տեղ տրամադրել քանի մը ընտանիքներու:

**Աղէտի պատճառած վնասը**

Ինչպէս ըսինք, հրդեհի տարածումը այնքան արագ տեղի ունեցաւ, որ շուարումի մատնեց տեղւոյն բնակիչները: Ոչ ոք կրցաւ ամբողջութեամբ փոխադրել իր ունեցած գոյքերը: Հազի իրենց երեխաներն ու կարգ մը անհրաժեշտ կարասիները առած դուրս կը թափուէին մօտակայ դաշտը: Իսկ խանութքանները, որոնցմէ շատեր հեռաւոր թաղերու մէջ կը բնակին, չի կրցան հասնիլ եւ իրոյ ճարակ եղաւ իրենց ամբողջ ունեցածը: Նոյն իսկ շատեր չէն կրցած իրենց

դրամարկներու մէջ գտնուած գումարները առնել:

Թեպէտ կարելի չէ այժմ որոշ գումար մը ըսել վնասի քանակի մասին, սակայն մօտաւոր հաշիւ մը հազարաւոր ոսկիներու վնաս մը ցոյց կու տայ: Բարեբախտաբար, այս դժբախտութեան



Էշրեֆիէ

միջոցին անձի կորուստ չէ եղած: Զանի մը հոգի վիրաւորուած են եւ անմիջապէս բժշկական խնամքի ենթարկուած:

**Թշուառութիւնը ծայր աստիճանի հասած**

800 ընտանիք մինչեւ առաւօտ բաց դաշտին մէջ գիշերել վերջ, առաւօտուն սկսան իրենց հիւղակներու ւերակներուն տակէն դուրս հանել այրուած գոյքերու մնացորդներ, թիթեղներ եւ ածխացած առարկաներ:

Բազմաթիւ ընտանիքներ, նոյն իսկ գաւաթ մը թէ խմելու հնարաւորութենէն զրկուած, արտասուաթոր կը սպասէն բաց դաշտին վրայ եւ կ'ողբան իրենց ճակատագիրը: Շատեր ոչ անկողին ունին ոչ ալ հագուստ: Ցուրտը եւ ձմեռը կը սպառնան բոլորի կեանքին: Հազարի մօտ աշակերտութիւնը մնացած է փողոցները: Առաջնորդարանի կարգադրութեամբ պարպուած է նաեւ Էշրեֆիի վարժարանի շէնքը, աղէտեալներուն յատկացուելու համար»:

\* \* \*

Յաջորդ օր, 2 փետրուար 1933-ին, «Աղէտ աղէտի ետեւ» խորագիրով խմբագրականով «Ազգակ» կը գրէր.

«Գործազրկութեան յառաջ բերած արհաւիրքը Պեյրուֆի հայ աշխատաւորութեան համար բաւական չէր: Ծաբաթներէ ի վեր անօթի ու թշուառ իր հիւղակին մէջ պատասպարուած աշխատաւորը, նախախնամական կարգադրութեամբ մը, զրկուեցաւ նաեւ այդ թիթեղեայ կիսախուլ խրճիթէն, դատապարտուելով բաց դաշտին վրայ գիշերելու ձմրան այս ցուրտին ու բուքին:

Եւ մէկ երկու ժամուան մէջ, մոխրացան մօտ 600 բնակարաններ եւ խուճապահար դուրս թափուեցան մեր 4000-ի մօտ դժբախտ հայրենակիցները, առանց անկողնի եւ տնական գոյքերու: Չարհուրելի աղէտը այնքան արագ եւ սաստկաշունչ տարածուեցաւ, որ հնարաւոր չդարձուց մեր խեղճ հայրենակիցներուն օգնութեան գործը: Տասնեակներով մեթր ղեպի եր-



Վրանաքաղաքին աղէտեալները հրդեհին յաջորդ օրը

կինք բարձրացող բոցը իր արձակած կայծերուն շնորհիւ մէկ անգամէն կը բռնկեցներ հրդեհը գանազան ուղղութիւններով եւ անկարելի կը դարձնէր հրշէջներու գործը:

Կրակի պատճառած ճարճատիւնը, աղէտեալներու արձակած աղիւտողով ճիւղերը, երեխաներու աղաղակները, կենդանիներու ձայները, ամենը իրար խառնուած այդ գիշեր, Աստուած իմ, ի՛նչ զարհուրելի տեսարան մը կը ներկայացնէին: Դաշտին վրայ խելագար մայրեր իրենց գաւակները կը փնտռէն, աղջիկներ իրենց եղբայրները կը կանչեն, հայրեր հրդեհներու մէջ իրենց վտանգուած սրտահատորները կ'որոնեն: Ամբողջ քաղաքը մէկ ժամուան մէջ արդէն ուռքի էր: Հետագայ մը մօտաւոր թաղերէ հազարաւորներ լցուած էին հրդեհին վայրը եւ անօթ՝ կասեց-

նելու բնութեան կատաղութիւնը, արտասուաթոր աչքերով կը դիտէին մարդկային զարհուրանքը:

Բարձր ըմփերը, Հանրապետութեան նախագահը, արն. Պ. Հելլօ, զօրավար Բերնէ, Պուշէտ, քոլոնել Խազէն, Բ. ըմփերութեան եւ Փոքր Սերայի բոլոր բարձրաստիճան պաշտօնատարները թափուած էին հրդեհին վայրը: Ֆրանսական ծովային ու ցամաքային ուժերը փութացած էին օգնութեան: Ծովային զինուորներ կրակներու մէջ նետուած կ'օգնէին հրկիզեալներուն: Կաթ. փոխաւորող Կարոյեան սրբազան ժամանակին հասած էր աղէտին վայրը: Խնամատարական մարմնի նախագահ Գասպար Իփէկեան, որ մինչեւ ուշ գիշեր ժամը 2:00-ը աղէտեալներուն մէջ կը գտնուէր, գերբնական աշխատանքի լծուած էր եւ կը վազէր մէկ կողմէն միւսը, մէկ կողմէ միսիթարելու համար դժբախտները, միւս կողմէ կարգադրութիւններ ընելու ձեռք առնուելիք միջոցներու շուրջ:

Նոյն հոգածութիւնն ու գուրգուրանքը ցոյց կու տային Ս. Վսեմութիւն Բ. ըմփերն ու Հանրապետութեան նախագահը, Անդրանիկ Կարապետեան տնօրէնը, ոստիկանապետը, Պեյրուֆի կառավարիչը, զինուորական հրամանատարութիւնը եւ տեղական ու հոգատար իշխանութեանց բոլոր պաշտօնատարները: Ս. Վ. Բոնսո, ինչպէս հրդեհի միջոցին, նոյնպէս եւ յաջորդ առաւօտ քանիցս այցելած է աղէտեալները, հետաքրքրուած անոնց վիճակով եւ աշխատած է միսիթարել: Հրդեհի պատահած միջոցին իսկ, արն. Բարձր ըմփերը հեռագրով Փարիզ հաղորդած է պատահած ողբերգութիւնը: Իսկ տիկին Բոնսո չափազանց յուզուած, արցունքով դիտած է աղէտեալներու վիճակը:

Հրկիզեալներու օգնութեան գործին հանդէպ հոգատար եւ տեղական իշխանութեանց կողմէ ցոյց տրուած հոգածու վերաբերմունքը նմանապէս կը հաստատեն անոնց գուրգուրանքն ու հետաքրքրութիւնը: Ինչպէս տեղեկացան մեր ընթերցողները, Բարձր ըմփերը եւ Հանրապետութեան նախագահը մեծ կարեւորութեամբ կը զբաղին օգնութեան գործով եւ միջոցներ կ'որոնեն մեղմելու համար թշուառութիւնը: Վերջին ծայր կարօտեալներու անմիջական հոգածութիւնը, Բ. ըմփերի կարգադրութեամբ յանձնուած է Հինուորական իշխանութեան: Վստահ ենք, որ Լիբանանի կառավարութիւնն ալ պիտի բերէ իր մասնակցութիւնը եւ պիտի ստանձնէ մէկ սախն ինքնուրոյն:

Բայց այդ բոլոր օգնութիւնները բաւական չէն դարմանելու համար զարհուրելի աղէտին պատճառած վնասը: Հոգն ու ապուրը հազի կրնան անօթութեան սպառնալիքէն առժամապէս ազատել մեր դժբախտացած հայրենակիցները: Մինչդեռ անոնք այժմ զրկուած են իրենց տնական բոլոր գոյքերէն ու կարասիներէն, հագուստեղէններէ, անկողնէ եւ այլ պիտոյքներէ: Մինչեւ հիմա երդիքի մը տակ ապաստանած էին, որը կը նկատէին իրենց սեփականութիւնը: Կը յուսային որ մը զայն քանդել եւ ուրիշ տեղ մը կառուցել: Սակայն հիմա անոնք թափառաշրջիկ գաղթականներ դարձան: Իրենց երեակայութեան սահմանէն ի սպաս հեռացաւ իրենց միջոցներով տուն տեղ ըլլալու եւ սեփական պատասպարան մը ունենալու յոյսը:

Խորին երախտագիտութեամբ եւ շնորհակալութեամբ յուսալով հանդերձ որ հոգատար եւ տեղական իշխանութիւնները պիտի չզրկուին ամեն տեսակ օգնութիւն եւ դիւրութիւն, շատ կարեւոր պարտականութիւններ կը ծանրանան մեր վրայ: Մեր անհոգութիւնն ու անտարբերութիւնը նախ գէշ տպաւորութիւն մը կը գործեն իշխանութեանց վրայ, երկրորդ կը տկարացնեն նպաստի շարժումները: Երբ, հոս, մեր աչքերուն առջեւ այնքան զարհուրելի կերպով ցցուած է աղէտը եւ մեր աղէտեալ սրտահատորներու թշուառութեան ականատես կ'ըլլանք, անմիջապէս պետք է փութալ օգնութեան: Մինչեւ որ արտասահմանի հայրութեան նպաստները հասնին եւ Բարեգործականն ու այլ բարեգործ հաստատութիւններ իրենց հիմնական կարգադրութիւնները ընեն, Լիբանանի եւ Սուրիոյ հայութիւնը գործի սկսելով անմիջական կարեկցութեան պետք է փութալ: Խնամատարական մարմինը արդէն Պեյրուֆի համար կարգադրութիւններ ըրած է. իսկոյն գործի կը սկսին հոս, Սուրիոյ եւ Լիբանանի միւս շրջաններուն մէջ ալ պետք է ձեռնարկեն հանգանակութեանց, դրամական, հագուստեղէնի, անկողնի, տնական այլ պետքերու եւ այլն:

Արտասահմանի հայ մեծահարուստներու եւ Բարեգործական հաստատութեանց արդէն հեռագրաւ դիմումներ կատարուած են. վստահ ենք, որ անոնք անտարբեր պիտի չէ մնան. մասնաւոր արտասահմանի մեր մասնուր առանձին ուշադրութեամբ պիտի շեշտէ օգնութեան անհրաժեշտութիւնը:

Հայրենակիցներ, նախ մենք կատարենք մեր բաժինը, որովհետեւ աղէտը մեծ է եւ կարօտ միահամուռ նուիրումի»:

«ՔՆԱՐ»...

Շարունակուած 4-րդ էջէն

Նորահար կշռոյթներով, նազանքին նրբութեամբ նազե-լացած: Ապրիլը, աղջիկներ հայրը:

Պարային այս խնձորին մասնակցեցաւ նաեւ «Գայեա-նէն» արուեստի դաշտը նոր մշակելու պատրաստ մանուկ ու պարման սերունդը: Անոնք եւս ծափերով, դիմաւորուեցան: Յաջողութիւնը պակասագրողուցաւ: Ո՞վ իսկը դափ-նին. բոլորը, ամբողջը: Այս ամբողջին մաս կը կազմեն նա-եւ բեմին ետին անտես աշխատողներ, քուլիսային գործիչ-ները: Տարագներու պատասխանատուները:

... Բայց ինչպէ՞ս մոռնաք այդքան ճաշակաւոր, առի-թին յարմար, հայկական երբեմնի նորածեւութիւնը յուշող գեղեցկութիւնները: Խոհական ու պատուախնդիր զգես-տաւորումները, նախշուած զարդարուած: Իրաքանչիւրը իր գոգնոցով ու գօտիներով, թագ ու յարդարանքով: Գոյ-ներու պերճանք, հրապոյր եւ թովանք: Է՛հ, ինքնաբոյս հանդերձանքերը չեն, այլ՝ երկար ժամերու ստեղծագոր-ծական մատուցում:

Հանդիսութիւնը կը մօտենայ ւարտին: Բեմին վրայ «տեսանք» «Հայի աչքեր»-ը, թռչիւն մէջ էր՝ «Կապոյտ թռչուն»-ը, իսկ այդ «Իլիկները»՝ հայ կնոջ մատներուն միտքով հիւսուած:

Արցախը ինչպէ՞ս մոռնալ, ասմունքային կանչով, Իրմա Տետեանի ծայրով հռչակուած նոյն պահուն: Պարզապէս, յարթանակի ուխտ եւ վեհագոյն խոստում:

Շնորհակալութիւն եւ քեզ, սիրելի՛ Համագրային, մեր մշակոյթը ծաղկեցնելու նուիրուած անձնուրաց սերմա-նող, տարիներու հեղքով հարստացած մշակոյթի սերմա-ցան: Հունձը առատ է այսօր եւ բերքը բարի:

Ըմբռնելիքները հայեցողութեամբ յագեցած պարային այս խրախմանքը: Յարատեւութեան մաղթանք ամենուն եւ բարի երթ Համագրայինի «Լէտն Շանթ» մշակոյթի կեդ-րոնի բազմաճիւղ արուեստի դպրոցներուն:

«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ

ՃԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնա-գիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժան-մունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՆ 5:00:

ՄԱՅԱՄԱՆԻ ԲԱԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՆ: Մահազը կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան առեւ որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՊՈՒՐԳ ՀԱՄՈՒՄԻ

ԲԱՐԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՅՔԷՁԸ www.bourjhamoud.gov.lb

Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ) Օրը հաճելի է եւ ունիք բարձր տրամադրութիւն: Այս ձեռով կրնաք յաջողութիւն արձանագրել աշխատանքի եւ ընկերային կեանքի մէջ:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս) Օրը ունի աշխատանքային բնական ընթացք: Երեկոյ-եան կրնաք հանդիպիլ այն անձին, որուն հետ ժամադրու-ած էք: Ձեր խոստումը յարգեցէք անպայման:

ԵՐԿՈՒՐԵՆԿԱ (22 Մայիսէն 21 Յունիս) Լաւ ժամանակ պիտի անցընէք ձեր բարեկամներուն հետ: Օրը պիտի ըլլայ հաճելի, օգտակար՝ նիւթապէս եւ բարոյապէս: Լաւատես եղէք միշտ:

ԽԵՑՅՑԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս) Մի՛ վախնաք արտայայտելու ձեր փափաքները եւ բաղ-ձանքը: Ձեր շուրջինները պէտք է գիտնան, թէ ինչպիսի՛ անձ մըն էք եւ ի՞նչ կարողութեան տեր: Դուք ձեզ ծանօթա-ցուցէք առանց վարանումի:

ԱՌԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Հետաքրքրութեամբ պիտի հետեւիք օրուան անցու-դարձերուն, որպէսզի կարենաք ծանօթութիւն հաստատել ձեր շրջապատին հետ, օտարական մը չըլլաք:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Ձեր ծրագիրները իրագործելու համար մի՛ աճապա-րէք: Լաւ է, որ կեդրոնական տունէլ հարցը ընկարկելու եւ հանդարտութեամբ որոշելու ձեր ընկելը:

ԿԵՐԻՆ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր) Դուք կը սպասէք շատ, բայց ուրիշներ ոչ: Գիտցէք, որ ամէն մարդ նոյն ձեռով չի մտածեր եւ միեւնոյն կեցումձը չ'ունենար, ինչ որ դուք: Այս կտըղ նկատի առէք եւ մի՛ նեղ-լիք գուր տեղ:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր) Օրուան յայտագիրը ինչ որ է, կատարեցէք զայն: Եթէ անտրամադրիր էք, պէտք է զօրացնէք ձեր կամը եւ շա-րունակէք ձեր գործին իրագործումը:

ԱՐԵՂՆԱՌՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր) Մարզական իրագործման մը ծրագիրը ունիք, կատա-րեցէք անյապար, որովհետեւ այդ ձեռով պիտի կարենաք յաջող աշխատանք կատարել: Օրը այս կը թելադրէ: Մի՛ ծուլանաք:

ԱՅԾԵՂՁԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար) Ձանձրանալու կարիք չկայ տան մէջ, որովհետեւ այն-քան ընկելներ ունիք, որոնք կը սպասեն ձեր գործնական աշխատանքին: Մի՛ ծուլանաք, գործի՛ անցէք:

ՇՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար) Արուեստագետի մը յատուկ նոր ընթացք մը պիտի որ-դեգրէք, ինչ որ պիտի օգնէ ձեր կեանքին բնական ընթաց-քին շարունակման: Օրը օգտաշատ է:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ) Կ'աշխատիք, բայց նկատի չէք առնուիլ, հետեւաբար շանացէք նոր ձեւ մը կիրարկել, նոր շանք մը ըրէք, որպէս-զի ուշադրութիւն գրաւէք:

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 8005 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

ՍՈՒՏՈՔՈՒ 8 9 5 6 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

- ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ 1. Խրամ, փոս - Մանր դրամ: 2. Դատարան - Արական անուն: 3. Բռնատեղ - Իգական անուն: 4. Անպատմելի, աննկարագրելի - Այբուբենէն: 5. Քիչով գոհացող: 6. Օդ - Աշխատիր, ձգտիր: 7. Պտուղի արդամագ - Ուղուկ - Անհաստատ: 8. Ստացական ածական - Արաբական երկիր: 9. Կացին, փայտատ - Չայնանիշ: 10. 42 քմ. 195 մ. երկարութեամբ վագը - Տառի մը անունը: 11. Կարծր փայտով մշտադալար թուփ - Պատուար:

- ՈՂՂԱՅԱՅԵԱՆ 1. Պատուիր, տկարամիտ: 2. Կիլիկեան քաղաք - Հայրենի երգիչ: 3. Աստուածային - Պահեցողութիւն: 4. Սան - Աբրահամի, Նաքովրի եւ Առանի հայրը: 5. Ֆրանսական գետ - Լոկ, միայն - Շէն: 6. Վետագործերու թագաւոր: 7. Բերան փոթորոջ համ - Ընկեր: 8. Չետեղէ՛ - Թերթի երես - Յուցական ածական: 9. «Հոգեւոր սուր» կոչուած հայ կաթողիկոս: 10. Հայ դիցուհի - Լիբանանահայ մամուլէն: 11. Ծախու՛ առ - Երթ, մեկնում - Արկաղեան սոխակ:

Պատրաստեց՝ Տ. Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒԵՈՒՄՆԵՐԸ ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 8004 ՍՈՒՏՈՔՈՒ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 1962 - 2012 16 ՄԱՅԻՄ «ՆԱՄՈՒՍ»-Ի ԲԵՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ Հայ աւետարանական քուրճի Շրջանաւարտից միութեան թատերախումբը 28 ապրիլ եւ 5 մայիս 1962 շաբաթ երեկոյեան ժամը 9:00-ին «Քուրճ տը լա Սալ»ի, սրահին մէջ ներկայացուց Շիրվանզադէի «Նամուս»-ը. ընտանեկան ողբերգու-թիւն մը, որ կը բաղկանայ նախերգանքէ եւ չորս արարներէ: Յաւելեալ գերեկոյթ մըն ալ տրուեցաւ ուսանողներու, շաբաթ 28 ապրիլի կեսօրը ետք ժամը 4:00-ին: Մենք այս տողերով կ'անդրադառնանք մայիս 5-ի բեմադրութեան, որ նախորդին կարգ մը թերութիւններէն զերծ էր: Դերուսոյց Անդրանիկ Կարապետեան տրամադրութեան տակ եղած ուժերով յարմար դերաբաշխում կատարած էր: Իրեն վերապահած էր անանդապաշտ, պատուախնդիր, դաժան ընտանիքի հօր մը տիպարը յանձին Բարխուդարի, զորս յաջողապէս մարմնաւորեց: Նկատի ունենալով դերերու առատութիւնը եւ դերակատարներու թիւին սահ-մանափակ ըլլալը, կարգ մը դերակատարներ կրկնակ, երբեմն ալ երեք դերերով պարտաւորուած էին բեմ գալ. այս հարկադրանքէն առաջ եկած անպատեհու-թիւնը եթէ ուրիշ դերակատարներու պարագային այդքան ալ աչքառու չէր, սա-կայն Սեյրանի մօր Մարիամի եւ Ռուստամի մօր՝ Սանամի դերերով Երանիկ Գառ-նիկեան նիւթին անձանօթ հանդիսականին մտքին մէջ կրնար շփոթ ստեղծել՝ նկատի ունենալով, որ երկու դերերն ալ բարեսիրտ, գուրգուրոտ մօր մը տիպա-րը կը մարմնացնեն. Գառնիկեան հարազատօրէն մարմնաւորեց գանոնը: Յայտնութիւն մըն է Այտա Դերձակեան իր համարձակ խաղարկութեամբ Սու-սամբարի դերով: Կը յուսանք յառաջիկային անելի պատասխանատու դերերու մէջ տեսնել զինքը: Այտա Գրգեաշարեանի վիճակուած էր Սուսանի հրեշտակային տիպարին մարմնաւորումը, զոր հարազատօրէն ներկայացնելու ֆիզիքական յատկութիւն-ներով օժտուած է օրիորդը: Այիս Էմիօղլուեան Սուսանի մօր Գիւլնազի դերով ցոյց տուաւ խաղարկութիւն մը, որ թերութիւնէն զերծ էր: Մարի Զէշիշեան Շուշանիկի դերին մէջ հասարակ ամուսնական միջնորդ կնոջ մը տիպարը մարմնաւորեց, ինչպէս որ հարկ էր: Յովհաննէս Յարութիւնեան Ռուստամի պատասխանատու դերը մարմնաւո-րեց ըմբռնուած եւ զուսպ խաղարկութեամբ: Սեյրանի դերին մէջ յայտնութիւն մըն էր Վարուժան Կարապետեան իր դիմա-խաղերով, կեցուածքով, յարմար տիպարին: Հրաչ Գրգեաշարեան, որ միշտ տարեց մարդու կերպարները յաջողապէս կը մարմնաւորէր, իր շարժումներով, ձայնի եւ դիմախաղի արտայայտութեամբ յա-ջող էր Հայրապետի դերին մէջ: Յովհաննէս Եագուպեան խաղաց Շալի Շարուրի եւ Սերգէյ Բեգի դերերը, մաս-նաւորաբար առաջինին մէջ յաջող էր: Խաչիկ Պալապանեան Ջաւադ եւ Խաչեղբայր դերերուն յարմար տիպարն էր: Չաւեն Լամպաճեան, Սեդրակ Գագանճեան եւ Կարապետ Ագատեան երեք գի-տովները յաջող տիպարներ էին: Հարսնիքի տեսարանին փայլ տուին Թագուհի Աբրահամեանի եւ Սկրտիչ Զո-լաքեանի պարերը: Գառնիկ Գագանճեանի կողմէ կատարուած բեմադրարարումը յարմար էր: Նոյնպէս Կայծակ Գնդուկի դիմախաղարարումը: Երկրաշարժի, թռչուն-ներու, ձիու վագքի ձայները՝ տեղին: Իր ընդհանուր գիծերուն մէջ գնահատելի ներկայացում մըն էր «Նամուս»-ը:

Համագրային հայ կրթական եւ մշակութային միութիւն Հովանաւորութեամբ Ճարտարարուեստի պետական նախարար Պրն. ՎԼԵՃ ՍԱՊՈՒՆՃԵԱՆԻ Համագրային պարարուեստի դպրոց «Գայեանէ» պարախումբը կը ներկայացնէ ՏԱՐԵԿԱՆ ԵՆՈՅԹ Պարուսոյց եւ գեղարուեստական պատասխանատու ԱՆՐԱՆԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ Օգնական՝ Նարինէ Գրիգորեան 250 ՊՍՏԱՆԻ ՊԱՐԱՆՈՒՉԻՆԵՐ ԲԵՆ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՆ Սեպտեմբեր 18 եւ Շաբաթ, 19 Մայիս 2012-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, «Էմիլ Լանուս» հանդիսարանին մէջ, Տպալ: Տոմարու համար դիմել Լեւոն Շանթ կեդրոն՝ 01- 24 93 75 01- 26 58 99 Աղբայեան կեդրոն՝ 04 - 71 54 91 Համագրայինի գրախանութ՝ 01-24 12 63-4

ՕՂԵՐԵՒՈՅԹ 29°C 36% ԳԻՇԵՐ՝ 20°C 54% 29°C 28°C 26°C 25°C 19°C 24°C 28°C 28°C 26°C 25°C ՍԱՍԱՐ ԱՐԵՈՏ ՅԵՐԵՎ՝ ԽՈՆԱՐՈՒԹԻՒՆ՝ 29°C 48%

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ՀՄԸՄ ՊՈՒՐԴ ՀԱՄՈՒՏ 3ԱՂԹԵՑ, ՊԷՅՐՈՒԹ ՊԱՐՏՈՒԵՑԱԲ

Երեկ սկսան Լիբանանի պասեթպոլի աղջկանց Բ. դասակարգի ախոյեանություն 2011-2012 տարեշրջանի Ա. հանգրուանի մրցումները: ՅԱՄ Պուրճ Յամուտի կազմը յաղթանակով սկսա ախոյեանությունը, երբ ՅԱՄ-ի «Տեմիրճեան» կեդրոնին մեջ 45-42 արդիւնքով պարտութեան մատնեց ժամհուրը:

ԱՊԵՏԻՉՄ. ԼԻՔԱՆԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ

ԼՈՐԻ ԹԱՇՃԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ՝ 200 ՄԵԹՐ ՎԱԶՔԻ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒՆ

Կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ Լիբանանի աթլետիկայի ֆետերասիոնին, տեղի ունեցան Լիբանանի երիտասարդներու ախոյեանութեան մրցումները՝ ժամհուր եւ Շանվիլ վարժարաններուն դաշտերուն վրայ: Ծեմարանի աշակերտ եւ Շանվիլ ակումբին մաս կազմող Լորի Թաշճեան, որ 400 մետր վազքի մրցումներուն գրաւած էր առաջին դիրքը (1' 02" 30), 200 մետր վազքի մրցումներուն հանդիսացա երկրորդ՝ արձանագրելով 27" 18 արդիւնք մը: Առաջին դիրքը գրաւեց Մահա Մապլեմ (Ինթըր Լեպանոն), որ արձանագրեց 26" 52 արդիւնք մը: Երրորդ հանդիսացա Լորա Սալիպա (Անթոնիէ, 27" 33): Թէ՛ տղոց եւ թէ՛ ալ աղջկանց ընդհանուր դասաւորման մեջ առաջին դիրքը գրաւեց ժամհուր: Նշենք, որ Լորի Թաշճեան այս ախոյեանութեան մասնակցած միակ հայ աշակերտն էր:

ՂԱԶԱԽՍԱՆ ՎԻՄՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ ՊԻՏԻ ԺԱՄԱՆԷ ՀԱՅԱՍՏԱՆ

Ղազախստանի ֆուբոլի ազգային խումբը, նախքան Յայաստանի դէմ իր կատարելիք ֆուբոլի բարեկամական մրցումը, պիտի կատարէ այլ մրցում մըն ալ: Ինչպէս կը յայտնէ Ղազախստանի մամուլը, Ղազախստանի ֆուբոլի ֆետերասիոնը համաձայնութեան եկած է Խըրիւզգիստանի հետ, Ալմա Աթայի մեջ յառաջիկայ 1 յունիսին բարեկամական մրցում մը կատարելու համար:



Այս մրցումէն չորս օր ետք՝ 5 յունիսին, Ղազախստանի հիւրը պիտի ըլլայ Յայաստանի: Անդրադառնալով իր կազմին կատարելիք մրցումներուն, Ղազախստանի չեմպիոնները՝ Սիրուպա Պերանեք կ'ըսէ. «Եթէ ուշի ուշով նայիք 2014-ի Մոնտիալի գտումի մրցումներուն, պիտի տեսնեք, որ 4 անգամ պիտի կատարենք երկուբական մրցում՝ երեք օրուան ընդմիջումէ ետք: Այսպիսի ախոյեանութեան համար պէտք է լաւապէս պատրաստուինք: Յոս կու գամ ըսելու, որ Խըրիւզգիստանի դէմ դաշտ պիտի ներկայացնեն իմ պահեստի մարզիկներս, մինչ Յայաստանի դէմ դաշտ պիտի ներկայանանք զօրաւոր եւ հիմնական կազմով»: Նշենք, որ Ղազախստան - Խըրիւզգիստան մրցումին մուտքը ճրի է, մինչ Յայաստան - Ղազախստան մրցումին մուտքի նուազագոյն սակն է 3000 դրամ:

ՅՈՒՆԻՍԻՆ 11-14 ՅՈՒՆԻՍԻՆ

ԱՏԵԼ ՀԱՔԻՄԻ ՏԱՐԵԿԱՆ 2-ՐԳ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՅԱՇԱՐՔԸ

Կազմակերպութեամբ Լիբանանի փինկ փոնկի ֆետերասիոնին եւ գործակցութեամբ «Իժ Սիոր» ընկերութեան, յառաջիկայ 11-14 յունիսին Մոն լա Սալի մեջ (Այն Սաատէ) տեղի պիտի ունենայ Ատել Հաքիմի անան տարեկան 2-րդ միջազգային մրցաշարքը, որ յատկացուած է վեթերաններու: Ֆետերասիոնը կը տեղեկացնէ, որ արձանագրութեան վերջին պայմանաժամ ճշդուած է 24 մայիսը: Բոլոր անոնք, որոնք կը փափաքին այս մրցաշարքին մասնակցի, կրնան հեռաձայնել 03-999969 թիւին եւ կամ իրենց անունը ուղարկել հետեւեալ ե-նամակի հասցէին. lebanon.ttf@gmail.com

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ԿԻՐԱԿԻ, 20 ՄԱՅԻՍԻՆ՝ ԱՆԳՐԱՆԻԿ ՊԷՅՐՈՒԹ - ՀՄԸՄ ԱՆԹԻԼԻԱՍ

Լիբանանի պասեթպոլի ֆետերասիոնը կը հաղորդէ, որ կիրակի, 20 մայիսին, տեղի պիտի ունենայ Լիբանանի պասեթպոլի աղջկանց բաժակի մրցաշարքի աւարտական հանգրուանի մրցումը, որուն ընթացքին իրարու դէմ պիտի ճակատին Անդրանիկ Պէյրուք եւ ՅԱՄ Անթիլիպա: Մրցումը, որ տեղի պիտի ունենայ Ֆուատ Շեհապ մարզահամալիրին մեջ, պիտի սկսի ժամը 16:00-ին: Ֆետերասիոնը կը տեղեկացնէ, որ այս մրցումին տոմսակները կարելի է գնել դաշտին կիջէն: Յրապարակուեցա նաեւ Լիբանանի տղոց պասեթպոլի բաժակի մրցաշարքի կիսաաւարտականի եւ աւարտականի մրցումներուն յայտագիրը: Կիրակի, 20 մայիսին, վերոնշեալ մարզահամալիրին մեջ, սակայն երեկոյեան ժամը 18:00-ին, տեղի պիտի ունենայ Անիպալ Չահլէ - Շանվիլ կիսաաւարտականի մրցումը: Մրցումին յաղթականը, որ պիտի ապահովէ աւարտականի իր տոմսը, իր դէմ պիտի ունենայ Յուսիք: Աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ երկուշաբթի, 21 մայիսին, երեկոյեան ժամը 19:30-ին, ՅԱՄ-ի «Տեմիրճեան» կեդրոնին մեջ (Նաքքաշ):

3-13 ՅՈՒՆԻՍԻՆ

ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՃԱՏՐԱԿԻ ԱՌԱՋԻՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆԸ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ



Տեղի ունեցած երեկուան մամոյ ասուլիսն

Երեկ կեսօրին, Պէյրուքի «Կոլտըն Թիվիփ» պանդոկին մեջ տեղի ունեցա յատուկ մամոյ ասուլիս մը, որուն ընթացքին պաշտօնապէս յայտարարուեցա, որ յառաջիկայ 3-13 յունիսին Լիբանանի պիտի հիւրընկալէ Միջին Արեւելքի ճատրակի առաջին անհատական ախոյեանութիւնը: Նշենք, որ տղոց եւ աղջկանց այս ախոյեանութիւնը տեղի պիտի ունենայ հովանաւորութեամբ նախագահ զօր. Միշել Սլէյմանի եւ նախագահութեամբ ՖիՏԵ-ի նախագահ Քիրսան Իլիոմփինովի: Այս ախոյեանութեան գլխաւոր իրաւարար նշանակուած է Չարլզ Զէյլ, իսկ անոր օգնականները յառաջիկային պիտի նշանակուին Լիբանանի ճատրակի ֆետերասիոնին կողմէ: Մասնակցութեան սակ ճշդուած է 100

ամերիկեան տոլար: Առաջին հանդիսացողը պիտի ստանայ 1000 ամերիկեան տոլար, իսկ աղջկանց պարագային՝ 700 ամերիկեան տոլար: Նշենք, որ տեղի պիտի ունենայ նաեւ արագ ճատրակի մրցաշարք մըն ալ, որուն տիրացողը պիտի ստանայ 450 ամերիկեան տոլար: Տեղի պիտի ունենան ընդամենը 11 հանգրուանի մրցումներ: Առաջին 40 շարժումին համար նկատի առնուած է 90 վայրկեան, ապա՝ 30 վայրկեան, մինչեւ մրցումին աւարտը, որուն վրայ կ'անցնայ 30 երկվայրկեան՝ իւրաքանչիւր շարժումի համար, սկսեալ առաջին շարժումէն, իւրաքանչիւր խաղացողի համար, մրցումին ամբողջ տեւողութեան ընթացքին: Իսկ արագ ճատրակի պարագային տեղի պիտի ունենան 7 հանգրուանի մրցումներ:

ՃԱՏՐԱԿ

ԿԻՐԱԿԻ, 20 ՄԱՅԻՍԻՆ՝ ԱՐԱԳ-ՃԱՏՐԱԿԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆԸ

Կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ Լիբանանի ճատրակի ֆետերասիոնին, կիրակի, 20 մայիսին, Սայտայի քաղաքապետութեան մեջ տեղի պիտի ունենայ արագ ճատրակի խմբային ախոյեանութիւնը: Ֆետերասիոնի մամոյ քարտուղարութիւնը կը հաղորդէ, որ անուններու արձանագրութեան համար վերջին պայմանաժամ ճշդուած է հինգշաբթի, 17 մայիս, երեկոյեան ժամը 21:00-ը: Ֆետերասիոնին ե-նամակներուն հասցէներն են. lebanesechessfederation@hotmail.com եւ chihade1-chess@hotmail.com: Այլ գետնի վրայ, ֆետերասիոնը Ա. եւ Բ. դասակարգի ակումբներուն պատասխանատուները հրաւիրեց յատուկ ժողովի մը, որ տեղի պիտի ունենայ Արաբատ ակումբին մեջ (Քոռնիշ Նահր, «Փեժօ» ընկերութեան ետեւը), ուրբաթ, 18 մայիսի երեկոյեան ժամը 19:00-ին: Այդ ժողովին ֆետերասիոնը յատուկ լուսաբանութիւններ պիտի փոխանցէ ակումբներուն՝ կիրակի օր տեղի ունենալիք խմբային ախոյեանութեան գծով: Նշենք, որ իւրաքանչիւր մրցումի տեւողութիւնը պիտի ըլլայ 5 վայրկեան + 2 երկվայրկեան: Այդ ակումբներուն պատասխանատուները պարտին իրենց հետ բերել ախոյեանութեան մասնակցող իրենց խաղացողներուն ցանկը:

ԿՈՓՍՄԱՐՏ

ՀԱՅԱՍՏԱՆ 5 ՄԵՏԱՆՈՎ ՎԵՐԱԳԱՐՁԱԲ ՄՈՍԿՈՒՅԷՆ

Նախորդ շաբաթավերջին, Մոսկուայի մեջ աւարտեցա Ողիմպիական խաղերու նախկին ախոյեան Վալէրի Փոփենչենցոյի յիշատակին նուիրուած կոփամարտի միջազգային տարեկան մրցաշարքը: Լուրը, որ կը փոխանցէ armsport.am լրատուական կայքէջը, կը յայտնէ, որ Մոսկուա մեկնած հայրենի բոլոր հինգ մարզիկներն ալ Յայաստան վերադարձան մետալով: Յայաստանի Ողիմպիական կոմիտեն իր պաշտօնական կայքէջին մեջ կ'ըսէ, որ 81 քլ դասակարգին մեջ, թէեւ Տիգրան Արմենակեան հասաւ աւարտական հանգրուան, սակայն պարտուելով տիրացաւ արծաթ մետալին: Իսկ մնացեալ չորսը՝ Բարեղամ Յարութիւնեան (52 քլ), Գագիկ Գեորգեան, Կարէն Տոնակեանեան (60 քլ) եւ Յակոբ Մելքունեան (գերծանր կշիռ) տիրացան պրոնկ մետալին: Անոնց հետ Մոսկուա մեկնած էր Յայաստանի հաւաքականի երկրորդ մարզիչ Ֆեդիա Ալեքսանեան: Յայրենի մարզիկները Մոսկուայէն ուղղակի մեկնեցան Միւնխ (Պիլիոնուսիա): Անոնց ընկերակցեցաւ նաեւ գլխաւոր մարզիչ Կարէն Աղամալեան: Աղամալեանէն բացի, կազմին միացան Կորին Սողոմոնեան (52 քլ), Յրանոկ Տարգսեան (56 քլ), Արթուր Քիրաճեան (64 քլ), Վլատիմիր Մարգարեան (69 քլ), Յովհաննէս Պաշտով (60 քլ) եւ Լոնտոնի Ողիմպիական խաղերուն Յայաստանի միակ ներկայացուցիչը (կոփամարտի մեջ)՝ Անդրանիկ Յակոբեան (75 քլ): Մրցաշարքը, որ սկսաւ երեկ, պիտի աւարտի 20 մայիսին:

ԷՆ. ՊԻ. ԷՅ. - ՓԼԵՅ-ՕՖԻ Բ. ՀԱՆԳՐՈՒՆԱՆԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ

- ՄԻՔՍԸՐՁ - ՍԵԼԹԻՔՍ՝ 1-1 - ՕՔԼԱՀՈՍԱ ՍԻԹԻ - ԼԷՅՔԸՐՁ՝ 1-0

ԷՆ. ՊԻ. Էյ.ի պասեթպոլի ախոյեանութեան Բ. հանգրուանի մրցումներուն ծիրին մեջ, երեկ Ֆիլատելֆիա Սիքսըրզ մէկ կէտի տարբերութեամբ՝ 82-81 արդիւնքով յաղթելով Պոսթըն Սելթիքսի, յաջողեցաւ արդիւնքը հաւասարեցնել (1-1): Սելթիքսի մարզիկներէն Ռեյ Էլըն նշանակեց 17 կէտ, իսկ անոր խմբակից Զեյն Կառնեթ՝ 15 կէտ եւ 12 ռիպաւնտ:



Անոնց միջեւ երրորդ ճակատումը տեղի պիտի ունենայ վաղը՝ հինգշաբթի, Ֆիլատելֆիոյ մեջ: Օքլահոմա Սիթի 1-0 արդիւնքով յառաջացաւ Պոսթըն Սելթիքսի վրայ, երբ երեկ 119-90 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Լոս Անճելըս Էյթըրը: Յաղթական կազմին մարզիկներէն Ռասըլ Ուեքսթրօնը նշանակեց 27 կէտ, 9 էսիսթ եւ 7 ռիպաւնտ, մինչ անոր խմբակից Զեյնի Տիլըրնթ՝ 25 կէտ: Էյթըրզի մարզիկներ Զոպի Պրայնթը եւ Էնտրու Պայնսըմ նշանակեցին 20-ական կէտ: Այսօր տեղի կ'ունենայ Մայնի Յիթ - Ինտիանա Փէյսըրզ երկրորդ մրցումը: Յիթ այժմ 1-0 արդիւնքով կը յառաջանայ: Այսօր տեղի պիտի ունենայ նաեւ Սան Անթոնիօ Սիլըրզ - Լոս Անճելըս Բիլիմըրզ առաջին ճակատումը:

Advertisement for the 70th anniversary of the 'A. Hachikyan' foundation. It features a grid of 24 portraits of individuals, with text indicating a 24-hour online auction. The text includes 'Համազգայինի «Գ. Իփեկեան» Թատերախումբ 70 ամենակ' and '24 Մ'ախիտէն սկսեալ'.

### ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ ՄԱՀԱԿԱԿՆԵՐԻ ԿԸ ԽՆԴՐԵ ՎԵՐԱԳՐՁՆԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ 6 ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ 3ՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՊԸՇՊԵՆԵԼ

Ռուսական «Ռեկոմ» լրատու գործակալությունը կը հաղորդէ, որ Հայ առաքելական եկեղեցւոյ վրահայոց թեմը Վրաստանի Նախագահ Միխայիլ Սահակաշվիլիին նամակ յղած է՝ խնդրելով հայկական պատմական յուշարձաններու պահպանման ուղղութեամբ քայլերու ձեռնարկել, ինչպէս նաեւ թեմին վերադարձնել 6 հայկական եկեղեցիները՝ Թիֆլիսի Ս. Նորաշէնը, Ս. Նշանը, Ս. Գեորգը, Ս. Մինասը, Շամխորեցոց Ս. Աստուածածինը եւ Ախալցխայի Ս. Նշանը:

14 մայիսի տեղատարափ անձրեւներուն պատճառով փոխ եկած էր Թիֆլիսի՝ 1701-ին կառուցուած Ս. Նշան եկեղեցւոյ գմբէթը:

Յուշարձաններու պաշտպանութեան գործակալութեան փորձագետները ուսումնասիրած են իրավիճակը եւ ճարտարապետներուն յանձնարարած են եկեղեցւոյ վերակառուցման նախագիծերուն մէջ փոփոխութիւններ կատարել:

### ՀԱՄԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջնի

Երկու աւարտին որդեգրուած է միացեալ հոշակագիր, ուր միջազգային իրավիճակի զարգացման հիմնական ուղղութիւններուն եւ Հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութեան գործունէութեան արժեւորումը կատարուած է: Կազմակերպութեան անդամ երկիրներուն ղեկավարները յիշեալ փաստաթուղթով նաեւ հաստատած են Հաւաքական անվտանգութեան վերաբերող պայմանագիրին նպատակներուն եւ սկզբունքներուն նուիրականութիւնը, արտաքին քաղաքականութեան, ռազմական եւ ռազմական-արհեստագիտական բնագաւառներուն մէջ, անդրազգային մարտահրաւրներուն եւ անվտանգութեան ու կայունութեան սպառնացող վտանգներուն հակազդելու իմաստով դաշնակցային յարաբերութիւնները զարգացնելու եւ ամրապնդելու պատրաստակամութիւնը:

Հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութեան Հաւաքական անվտանգութեան խորհուրդը նաեւ որոշում տուած է կազմակերպութեան պատուով նշան հաստատելու եւ Հաւաքական անվտանգութեան խորհուրդի պատուով գիրով պարգեւատրումներ կատարելու մասին:

ՀԱՅ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԻՆ

### ԹՈՒՐԲԻԱ - ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ 3ԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԻՏԻ ԱՇԽՈՒԺԱՆԱՆ

«Անատոլու» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Կուլիտօ Վեսթերվելէ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Տաւութօղլուի հետ հանդիպում ունենալէ ետք յայտարարած է, որ ինք համոզուած է, որ Եւրոպայի մէջ վերջին ընտրութիւնները կը վկայեն այն մասին, որ Թուրքիոյ եւ Եւրոպական Միութեան յարաբերութիւնները պիտի աշխուժանան:

«Այս հարցին մէջ Գերմանիան կրնայ օգտակար ըլլալ: Թուրքիոյ հետ յարաբերութիւններու ընդլայնումը կը բխի ինչպէս Թուրքիոյ, այնպէս ալ Եւրոպայի շահերէն», ըսած է ան:

Անդրադառնալով այն հարցին, թէ արդեօք Ֆրանսայի նոր նախագահ Ֆրանսուա Հոլլանտի՝ երկ նախատեսուած Գերմանիա այցելութեան ընթացքին պիտի քննարկուի՞ն Թուրքիա-Եւրոպական Միութիւն յարաբերութիւնները, ան



Վեսթերվելէ եւ Տաւութօղլու

նշած է, որ երկու պետութիւններն ալ իրենց համար նոյն հարթութեան վրայ են:

«Հակառակ երբեմն երբեմն յառաջացող տարակարծութիւններուն, երկու կողմերն ալ յարաբերութիւններու քննարկումները պիտի շահին», ըսած է ան:

Գերմանիոյ դիւանագիտութեան պետը որոշուած է սուրիացի գաղթականներուն ապաստան տալու Թուրքիոյ քայլը:

### ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ. «ԿԵՂԾՈՒՄԸ...

Շարունակուած Ա. Էջնի

«ԱՄՍՈՒԹԻՒՆ».- Դուք կանխատեսո՞ւմ էք ընկերային կամ քաղաքական պայթիւն:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Տանկացած պայթիւն չէմ էլ ուզում, որ լինի, դրա մասին չէ խօսքը, դա ցանկութեան հետ կապ չունի:

Բայց որ այս կերպ իրավիճակը գոյութիւն ունի, եւ որ այս վիճակը չի կարող երկար տեւել, եւ դրանում վստահ եմ:

«ԱՄՍՈՒԹԻՒՆ».- Ինչի՞ կարող է յանգեցնել այս իրավիճակը:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Ամենասարսափելին արտագաղթի շարունակութիւնն է: Մարդիկ, որ յուսախաբ են լինում, մարդիկ, որ այլեւս փախուցիկ վերջում լոյս չեն տեսնում, եւ իրենց ճակատագիրը փորձում են այլ ափերում փնտռել: Դա ամենասարսափելին է, բայց եւ նաեւ չէի ուզեայ, որ մենք քաղաքական անկայունութեան օրերը անընդմեջ շարունակենք:

«ԱՄՍՈՒԹԻՒՆ».- Դաշնակցութիւնը դաշնակիցներ փնտռելո՞ւ է իր այլ պայքարում, եւ թէ՛ այդ, ապա ուրե՞ր կարող են լինել այդ դաշնակիցները:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Մենք նոյնիսկ այս պահին գերծ ենք մնալու ինքնապահպան գործողութիւններին: Մեր դաշնակիցը համարում ենք ժողովրդին: Կոնկրետ հարցեր յարաբերելու համար կարելի է ցանկացած ուժի հետ համագործակցել, բայց ընդհանրապէս համագործակցութիւնը ինքնակազմակերպութեան մէջ մի ծրագիր ունենք, որն ուզում ենք իրագործել այս երկրում:

«ԱՄՍՈՒԹԻՒՆ».- Միասնական կեդրոնը այլեւս գոյութիւն չունի՞:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Մենք պայքարը շարունակելու ենք. ամէն օր, ամէն տեղ անարդարութեան դէմ պայքարելու ենք: Մենք շղթայագերծելու ենք մի պայքար բոլոր բնագաւառներում, բոլոր աստիճաններում, մինչեւ կարողանանք հասնել այն արդիւնքին, որ թէ՛ ժողովուրդը իմաստ գտնի իր քուն ճշգրիտ ձեւով արձանագրելու, թէ՛ իշխանութիւններին հնարաւոր չլինի այս մեղսոտու առաջ գալու, որովհետեւ

ընտրատեղամասերում տարուող ընտրակեղծիքները ընտրական յանձնախմբերի ճշգրիտ պարտականութիւնները կատարելով են պայմանաւորուած: Ընտրակաշառքի դէմ առնելու գործը իրաւապահ մարմիններին է, նշանակում է՝ մեր երկրում իրաւապահ մարմիններ չունենք:

«ԱՄՍՈՒԹԻՒՆ».- Դաշնակցութիւնը դաշնակիցներ փնտռելո՞ւ է իր այլ պայքարում, եւ թէ՛ այդ, ապա ուրե՞ր կարող են լինել այդ դաշնակիցները:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Կյո հարցերի պատասխանը մենք ճշդելու ենք մեր գալիք Հայաստանի Գերագոյն ժողովի ընթացքում: Ոչ ոք չի կարող ի սկզբանէ այդ հարցերին պատասխանել, բայց մեր կազմակերպութեան մէջ եղած տրամադրութիւնը փաստում է, որ մենք ընտրութիւններին մասնակցելու ենք սեփական թեկնածուով, որովհետեւ ընտրութիւնները վերջ ի վերջոյ պայքարի հնարաւորութիւն են, ժողովրդին քաղաքականացնելու միջոց են, եւ այս իշխանութիւնները, յայտնի ընտրութիւն կազմակերպելով, շատ մեծ դժուարութիւն են ունենալու նախագահական ընտրութիւններին:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Կարծում եմ գործառնող միասնական կեդրոնը ընտրութիւնների ընթացքը վերահսկելու համար էր եւ իր գործառնողը աւարտել է:

«ԱՄՍՈՒԹԻՒՆ».- Անցեւոր նախագահական ընտրութիւններ են, Դաշնակցութիւնը ի՞նչ է անելու՞ ո՞ւմ թեկնածուութիւնն է սատարելու կամ իր թեկնածուին առաջարկելու՞ է:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ.- Կյո հարցերի պատասխանը մենք ճշդելու ենք մեր գալիք Հայաստանի Գերագոյն ժողովի ընթացքում: Ոչ ոք չի կարող ի սկզբանէ այդ հարցերին պատասխանել, բայց մեր կազմակերպութեան մէջ եղած տրամադրութիւնը փաստում է, որ մենք ընտրութիւններին մասնակցելու ենք սեփական թեկնածուով, որովհետեւ ընտրութիւնները վերջ ի վերջոյ պայքարի հնարաւորութիւն են, ժողովրդին քաղաքականացնելու միջոց են, եւ այս իշխանութիւնները, յայտնի ընտրութիւն կազմակերպելով, շատ մեծ դժուարութիւն են ունենալու նախագահական ընտրութիւններին:

JEPA Men's Wear Bourj Hammoud Tel: 01 / 256689 - 03 / 666525

Ernico Bruno handcrafted in Italy Elyssar Highway - 04 930 064

AZTAG Daily www.aztagdaily.com

FedEx Express Express Falcon Aviation Services fedex.com/lb 01-987000

ՕՒԵՐԵՒՈՅՐ ԿԵԱՆՔ ԱՖՏԻԼ AFHIL www.afhil.com

«ԱԶԳԱԿ»Ի ԱՐԱՔԵՐԵՆ ԿԱՅՔԵԶԸ www.aztagarabic.com

### ԳԵՐՄԱՆԱԿԱՆ «ԱՐ. ՏԱՊԼԻՈՒ. Ի.» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ «ՆԱՊՈՒՔՕ»-ԷՆ ԳՈՒՐՄ ԳԱԼ

Գերմանական ուժանիւթի հսկայ «Ար. Տապլու. Ի.» ընկերութիւնը կը քննարկէ «Նապուքօ» նախագիծի որդու գալու կարելիութիւնը, որովհետեւ նախագիծի արժեքը գրեթէ կրկնապատկուած է՝ 8 միլիարդ եւրոյէն հասնելով մինչեւ 15 միլիարդ եւրոյի, իսկ Ազրայեանի եւ Թուրքմենիստանի հետ համաձայնագիր չէ կնքուած:

«Այդ փոփոխութիւնները հաշուի առնելով՝ մենք որոշած ենք վերանայիլ, արդեօք «Նապուքօ»-ին մեր մասնակցութիւնը մեր առեւտրական եւ ռազմավարական շահերուն կը համապատասխանէ», յայտարարած են «Ար. Տապլու. Ի.»-էն, սակայն շեշտելով, որ վերջնական որոշում տակաւին չէ տրուած:

Ապրիլի վերջաւորութեան աստիճական «Օ. Էս. Վի.» ընկերութիւնը չէր բացառել, որ կրնայ ստեղծուիլ «Նապուքօ»-ին աւելի կարճ տարբերակը, որուն միջոցով թուրք-պուլկարական սահմանէն կազմ պիտի հասնի Աստրիա:

Նախապէս հունգարական «Էս. Օ. Էլ.» ընկերութիւնը յայտարարած էր, որ ծրագրի իրագործման հարցին շուրջ լուրջ կասկածներ ունի եւ պատրաստ է իր բաժնետոմսերը վաճառելու:

Պուլկարիա նոյնպէս յայտարարած էր, որ նախագիծի իրագործումը իրատեսական է միայն Եւրոպական Ներդրումային դրամատան աջակցութեամբ, որմէ ետք Պուլկարիան պիտի կարենայ աստիճանաբար փոխառուցել վարկերը:

### ՄՈՍԿՈՒՎ ՔՈՍՈՎՈՅԻ ՄԷՉ...

Շարունակուած Ա. Էջնի

Ռուս դիւանագետները կը յայտնեն, որ նման մտադրութիւնները չեն կրնար չանհանգստացնել միջազգային ընտանիքը:

Միւս կողմէ, շրջանին մէջ իրանեան քաղաքականութեան հետեւող շրջանակներ լիբանանեան «ժամհուրիա» օրաթերթին յայտնեցին, որ երկու դէպքեր կրնան մեծ ազդեցութիւն ունենալ մասնաւորաբար սուրիական տագնապի ապագային, ինչպէս նաեւ շրջանի կացութեան վրայ: Անոնք կը նշեն, որ առաջին զարգացումը Սուրիոյ մէջ կալանաւորուած թուրք լրագրողներու, մասնաւորաբար Թուրքիոյ մէջ իսլամական շրջանակներուն մէջ մեծ համաբաւ վայելող Ատամ Եօզքիւփի ազատ արձակման աշխատանքին մէջ իրանեան միջնորդութեան յաջողութիւնն է:

Շրջանակները կը յայտնեն, որ Եօզքիւփի ազատ արձակումը կրնայ Անգարայի եւ Դամասկոսի միջեւ որոշ հաշտութեան առաջնորդել, մասնաւորաբար Երտողանի կառավարութեան մօտ գոյացումէն ետք այն համաձուլման, թէ մօտիկ ապագային սուրիական վարչակարգը տապալել անկարելի է, նշեալ կառավարութեան այն զգացումներն լոյսին տակ, թէ Սուրիոյ նկատմամբ ամերիկեան եւ եւրոպական կեցուածքներուն մէջ կարեւոր շրջադարձեր սկսած են կատարուիլ:

Շրջանակները կը նշեն, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ահմետ Տաւութօղլու անցեալ տարի Ռամատանի ժամանակ Թեհրան իր այցելութեան ընթացքին իր պաշտօնակից Ալի Լքպար Սալեհիի յայտնած է, որ Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատ «Ֆիթի տունէն առաջ իշխանութեան պիտի հեռանայ», օրին իրանեան դիւանագիտութեան պետը ժպտացած է եւ իր հիւրին ըսած. «Սպասե՛ք եւ տեսնե՛ք»: Երկու անձնաւորութեանց միջեւ տեղի ունեցած երկրորդ հանդիպումին ընթացքին Սալեհի Տաւութօղլուին յիշեցուցած է երեք ամիս առաջ իր կատարած հաստատումը: Տաւութօղլու վճռական կերպով ըսած է. «Աստուտարուան աւարտէն առաջ իշխանութեան պիտի հեռանայ»: Սալեհիի հեղեանական ժպիտով պատասխանած է. «Սպասե՛ք եւ տեսնե՛ք»: Իսկ քանի մը շաբաթ առաջ երկու անձնաւորութեանց միջեւ տեղի ունեցած երրորդ հանդիպումին ընթացքին Տաւութօղլու Սալեհիի ըսած է. «Կը թուի, որ սուրիական տագնապին վերաբերեալ իրաւունք ունենիր»:

Շրջանակները կը վստահեցնեն, որ Թեհրան Անգարայի խոստում ստացած է Սուրիոյ հետ իր սահմանը իրագործանային ձեւով փակել եւ ապահովական գոտիի ստեղծման կամ զինուորական միջամտութեան գաղափարներէն հրաժարիլ, փոխան Իրանի կողմէ իրանեան հիւլէական թղթածրարին լուծման մէջ Թուրքիոյ միջնորդի դեր տալուն:

Շրջանակները կը նշեն, որ երկրորդ զարգացումը 23 մայիսին Պաղատի մէջ Իրան-«5+1» բանակցութիւններն են, որոնք կը թուին, թէ իրանեան հիւլէական թղթածրարի լուծման մէջ յաջողութիւն պիտի ապահովեն, ուստի իրենց ազդեցութիւնը պիտի ունենան Սուրիոյ տագնապին նկատմամբ ամերիկեան եւ եւրոպական կեցուածքներուն վրայ, բան մը, որուն ցուցանիշները արդէն բազմաթիւ մակարդակներու վրայ սկսած են ի յայտ գալ, մասնաւորաբար Դամասկոսի մէջ տեղի ունեցած երկու ակաւաւորումներէն ետք:

Սուրիոյ Ընտրական կեդրոնական յանձնախումբը երկէ հրապարակեց խորհրդարանական ընտրութեան վերջնական արդիւնքները, ըստ որոնց, ընտրութեան մասնակցութեան համեմատութիւնը 51.26 առ հարիւր էր եւ յարթակ արձանագրած երեսփոխական թեկնածուներու շարքին են 30 կիներ:

«Ռոյթըր» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Իտիլիա նախագին մէջ ակաւի մը պայթումին պատճառով միջազգային դէտերու մէկ ինքնաշարժը վնասուած է, սակայն վիրաւորներ չեն արձանագրուած:

ԳՐԱԴՈՒՄՈՒ ՕՐ ՀՄՄՍ-Ի ՊՈՒՐԳ ՀՆՄՈՒՏԻ ՄԱՆԱԿԻՒՄ 8 ԵՒ 23 ՅՈՒՆԻՍ, 2012

HIF D Tel. 04-540973 04-547000 ՕՐՈՒՄՆ ԴԱՇԸ ՉՈՐԵՐՇԱԲԹԻ Գառնուկի լիցք + արցան + անուշեղէն Սակ՝ 12,000 Լ.Ո. BOGHOS OPTIC Autoroute Jdeideh Tel.: 01-870016 03-194688